ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

***2011թվականին***

***կատարած աշխատանքների***

ԵՐԵՎԱՆ 2012

Կազմող՝ Հ. Ղազարյան

«Գիրք» հրատարակչություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2011թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հայաստանի Ազգային գրադարանի գործունեությունը 2011 թվականին ընթացել է հավաքածուների համալրման, մշակման, պահպանման, սպասարկման, գրականության թվայնացման աշխատանքները կազմակերպելու և շարունակելու ուղղությամբ:

ՀԱԳ-ի ընդհանուր հավաքածուն 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.802.157 միավոր գրականություն, որից գործող հավաքածուն՝ 6.575.590 միավոր, պահուստային հավաքածուն՝ 115.696 միավոր, գրքափոխանակության հավաքածուն՝ 110.871 միավոր գրականություն:

2012 թվականին ստացվել է 54.630 միավոր գրականություն, որից որպես պարտադիր օրինակ՝ 13.535 միավոր, գնում և բաժանորդագրություն սուբսիդիայով տրամադրված գումարով՝ 2.874, որից 2.071 միավոր գիրք, 145 անուն պարբերական մամուլ, 656 միավոր նյութական այլ կրիչներ և 2 էլեկտրոնային հրատարակություն:

Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուները համալրվել են նաև տեղական ու միջազգային նվիրատվությունների և գրքափոխանակության միջոցով: 2011 թվականին «նվեր» աղբյուրով ստացվել է 22.602 միավոր գրականություն, որից 12.383 միավոր գիրք, 5.318 միավոր հանդես, 1.441 կազմ լրագիր և 3.460 միավոր տեղեկատվության այլ կրիչներ:

Հայաստանի ազգային գրադարանը համագործակցում է 42 երկրների 162 գրադարանների, կազմակերպությունների և անհատների հետ:

Միջազգային գրքափոխանակության միջոցով տարվա ընթացքում ստացվել է 1.263 միավոր, հայաստանյան գրքափոխանակությամբ՝ 215 միավոր գրականություն:

Արտերկրից «նվեր» աղբյուրով ստացվել է 12.160 միավոր գրականություն:

ՀԱԳ-ը համագործակցում է նաև Հայաստանում գործող 21 օտար. երկրյա դեսպանատների ու միջազգային կազմակերպությունների գրասենյակների հետ:

Տարվա ընթացքում նոր կապեր են հաստատվել արտասահմանի հայկական գաղթօջախներում հայերեն կամ հայերի մասին տպագրություն իրականացնող տարբեր կազմակերպությունների և անհատների հետ: Ռուսաստանի Դաշնության 9 քաղաքներից ստացվել է 110 միավոր, Ուկրաինայի 3 քաղաքներից՝ 128 միավոր, Իրանից, Թուրքիայից, Հունաստանից, Վրաստանից, Բելառուսից, Լեհաստանից և այլ երկրներից գրականություն, ընդհանուր թվով 1.984 միավոր:

Հայաստանի ազգային գրադարանը անդամակցում է CENL, IFLA, БАЕ միջազգային գրադարանային կազմակերպություններին:

2011 թվականի ընթացքում շրջիկ գրադարանով՝ բիբլիոբուսով, այցեր են կատարվել Կոտայքի, Վայոց ձորի, Արագածոտնի մարզեր, հրատարակիչների հետ համատեղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

«Բիբլիոբուսով» կատարած այցերի ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի գրքափոխանակության հավաքածուից 2.489 միավոր գրականություն հատկացվել է ՀՀ գրադարաններին: ԼՂՀ գրադարաններին հատկացվել է 1.887 միավոր գրականություն:

Տարվա ընթացքում նոր կապեր են հաստատվել ԱՊՀ և Մերձբալթյան երկրների հայ համայնքների հետ, որոնք հայերեն կամ հայերի մասին գրականություն են հրատարակում: Այդ համայնքներից ստացվել է 1.984 միավոր գրականություն՝ գիրք, ամսագիր, թերթ:

Հաշվետու տարում գրադարանի տարբեր ընթերցասրահներից օգտվել է 26.710 ընթերցող, տրվել է 1.583.811 միավոր գրականություն: Հաճախումների թիվը կազմել է 271.729: Գրադարանի ընթերցողների մեծ մասը՝ 69,3%-ը, 17-40 տարեկան է:

ՄԱԿ-ի հրատարակությունների ավանդապահ ընթերցասրահում սպասարկվել են նաև Համաշխարհային բանկի, Եվրախորհրդի, ՆԱՏՕ-ի հրատարակությունները:

2011թ. Հայաստանի ազգային գրադարանի միջգրադարանային բաժնույթից օգտվել է 91 բաժանորդ, որոնց տրվել է 1.243 միավոր գրականություն: Միջազգային միջգրադարանային բաժնույթով այլ գրադարաններ է ուղարկվել 110 գրքի պատվեր, ստացվել է 52 միավոր գիրք:

ՀԱԳ-ը ստացել է 5 պատվեր, որից 4 - ը բավարարվել է: Կնքվել են նոր պայմանագրեր հայաստանյան բուհերի հետ՝ միջգրադարանային բաժնույթից օգտվելու համար:

2011 թվականին գրադարանում կազմակերպվել է 95 զանգվածային միջոցառում (81-ը՝ գրադարանում, 14-ը՝ Երևանում և մարզերում)՝ հոբելյանական և թեմատիկ ցուցահանդեսներ, գրքերի շնորհանդեսներ, կինոֆիլմերի ցուցադրություններ, հանդիպումներ անվանի մարդկանց հետ, այցելություններ այլ գրադարաններ և մշակութային օջախներ:

«Տիգրան Մեծ - 2150», «Ալեքսանդր Մյասնիկյան - 125», «Արքեպիսկոպոս Մեսրոպ Աշճյան - 70», «Ֆրիտյոֆ Նանսեն - 150», «Մոմիկ-750», «Առնո Բաբաջանյան-90» և այլ հոբելյանական ցուցահանդեսներ ուղեկցվել են ելույթներով, դասախոսություններով:

Հաշվետու տարում մայիսի 31- հունիսի 2-ը կազմակերպվել է «Հայկական գրատպության 500-ամյակը. անցյալը և ներկան» խորագրով երկօրյա գիտաժողով՝ նվիրված հայկական գրատպության 500-ամյակին: Անցկացվել է նաև Հայաստանի գրադարանների 2009թ. վիճակագրական տվյալներին նվիրված խորհրդակցություն, որին մասնակցել են մարզային ու համայնքային գրադարանների աշխատակիցները: Անցկացվել է քննարկում «Հովհաննես Թումանյանը հայ գրականության զարգացման ելակետ, չափանիշ և ուղենիշ» թեմայով: Սեպտեմբերի 8-ին Գյումրիում անցկացվեց Տեղական ինքնակառավարման մարմինների 15-ամյակին նվիրված «Արտ-էքսպո» ցուցահանդես, որին գրադարանը մասնակցել է բիբլիոբուսով՝ համապատասխան ցուցադրությամբ և 10 մարզերին վերաբերող տեղեկատու-մատենագիտական գրականության ցանկերով: Ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում կազմակերպվել են միջոցառումներ՝ «Գրիգոր Խանջյանի արվեստը», «Գրատպությունը տեսական ու մատենագիտական աղբյուրներում», «Ռոբերտ Էլիբե-

կյան-70», «Առնո Բաբաջանյան-90», «Հնդկահայ տպագրություն» խորագրերով ցուցահանդեսները, որոնց ընթացքում ցուցադրվել են նաև տեսանյութեր, լսվել են զեկուցումներ: Հոբելյանական տարելից-ների, հիշարժան իրադարձությունների կապակցությամբ կազմակեր-պվել են «ՀՀ անկախության 20-ամյակ», «Գրիգոր Զոհրապ-150», «Գարեգին Նժդեհ-125», «Միսաք Մեծարենց-125», «Հակոբ Մնձուրի-125» միջոցառումները, գրադարանավարի օրվա կապակցությամբ կազմակերպվել են Կոնդակների և ռուսական հնատիպ գրքի ցուցա-դրություններ: Լայն արձագանք ստացավ գրադարանի գիտական ընթերցասրահում կազմակերպված «Տպագրությունը Վիեննայում» ցուցահանդեսը: Հայկական գրադարանային ասոցիացիայի հետ հա-մատեղ ՀԱԳ-ը կազմակերպել և ակտիվորեն մասնակցել է «Ազգային գրադարանային շաբաթ» միջոցառմանը:

Բազմաբնույթ միջոցառումներ են անցկացվել Հայաստանի ազգա-յին գրադարանի օրվա՝ հուլիսի 4-ի և Գրադարանավարի օրվա՝ հոկ-տեմբերի 7-ի առթիվ:

Գրադարանի ընթերցողներին տարվա ընթացքում տրվել է 19 գրավոր և 32.067 բանավոր մատենագիտական տեղեկանք:

Ընթացիկ տարում տպագրվել են «Հովհաննես Թումանյան 1970-1979թթ. Կենսամատենագիտությունը», «Ալ. Մյասնիկյան. Կենսամատե-նագիտությունը», «Հիշարժան տարեթվեր-2012» օրացույցը, «Հայաս-տանի գրադարանները 2010 թվականին. Աշխատանքների վիճակա-գրական վերլուծությունը», «Նոր գրքեր» հայերեն տեղեկատու ցանկը: «Հովհաննես Թումանյան. Կենսամատենագիտություն. 1970-79թթ.», ինչպես նաև «Նոր գրքեր» հայերեն կիսամյակային տեղեկատու ցանկը, «Հիշարժան տարեթվեր - 2012» օրացույցը, «Հայաստանի գրադարան-ները 2010 թվականին» հրատարակությունների էլեկտրոնային տարբե-րակները տեղադրված են գրադարանի կայքում /www.nla.am, ՀԱԳ հրա-տարակություններ/: Ընթացիկ տարում կազմվել է «Մշակ» լրագրի /Թիֆլիս, 1872-1921թթ./ 1879 թ. մատենագիտությունը և Վարդգես Սու-րենյանցի կենսամատենագիտությունը: Ընթացքի մեջ են Ազգային գրադարանի 2011 թ. տարեգրության և «Հայ գիրքը Իտալիայում. 1512-

1912թթ.» մատենագիտության կազմման և խմբագրման աշխատանքները: Կանոնավոր լույս է տեսել գրադարանի ամենամսյա «Հոգևոր Հայրենիք» պաշտոնաթերթը, ավելացել են թերթի խորագրերը, թարմացել է ոճը:

Գրադարանի ընթերցողներին տարվա ընթացքում տրվել է 19 գրավոր և 32.067 բանավոր մատենագիտական տեղեկանք:

Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել հավաքածուների պահպանման, վերականգնման, խնամքի և հիգիենիկ մշակման ուղղությամբ:

Ստուգվել են 13.970 գծամետրի վրա տեղադրված գլխավոր գրապահոցի հավաքածուները, վերականգնվել է 22.920 թերթ-միավոր, ախտահանվել է 21.240 թերթ-միավոր, կատարվել է 518 կաշեկազմ գրքերի կազմի փափկեցում, 95 միավորի բորբոսային շերտի մաքրում:

Մշակութային արժեք ներկայացնող 40 գիրք պայմանագրով տրվել է անհատ մասնագետին՝ կազմերը վերականգնելու համար և հետ է վերադարձվել: 30 միավոր գրքի կազմ վերականգնվել է գրադարանի համապատասխան բաժնի ուժերով:

Մատենադարան լիարժեք վերականգնման է հանձնվել 6 հնատիպ գիրք: Գրքերի վերականգնման աշխատանքները ընթացքի մեջ են:

Շարունակվել են գրադարանի գլխավոր գրապահոցի հավաքածուի անվանական վերահաշվառման աշխատանքները: Հաշվետու տարում վերահաշվառվել է 295.044 միավոր գրականություն:

Գրապահոցի մամուլի ենթաբաժնում վերահաշվառվել է 206.937 միավոր, որից՝ 2.177 կազմ հայերեն թերթ, օտարալեզու 7.684 կազմ թերթ: Վերահաշվառվել է նաև 197.076 միավոր ամսագիր, որից 18.867 միավորը՝ հայերեն, 154.888 միավորը՝ ռուսերեն, 23.287 միավորը՝ օտարալեզու: ALEPH ծրագրով գրապահոցի ֆոնդից մուտքագրվել է 88.107 միավոր գրականություն, որից հայերեն՝ 78.063, ռուսերեն՝ 10.044 միավոր: ՀԱԳ տնօրենի 2011թ. N 143-Ա § 9 հրամանի համաձայն նոյեմբերի 1-ից սկսվել և ավարտվել է գլխավոր գրապահոցի միջին մասնաշենքում պահպանվող հայերեն 179.419 միավոր ամսա-

գրերի տեղափոխությունը Թամանյանական մասնաշենքի վերանորոգված նկուղային հարկ:

2011թ. ընթացքում Կոտայքի մարզի 8 գրադարանի նվիրվել է 307 միավոր գրականություն, Սյունիքի մարզի 15 գրադարանի՝ 928 միավոր գրականություն, Արարատի մարզի 6 գրադարանի՝ 425 միավոր գրականություն, Վայոց ձորի մարզի 7 գրադարանի՝ 718 միավոր գրականություն, Նոր Նորքի համայնքային գրադարանին նվիրվել է 24 միավոր գրականություն, ԼՂՀ-ում նվիրաբերվել է 1.887 միավոր գրականություն, «Փոքր Մհեր» ռազմական կրթահամալիրին՝ 718 միավոր գրականություն:

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի՝ 2011թ. հունիսի 20-ի N 01/1.1/2669-11 հանձնարարականով 2011թ. ընթացքում ձևավորվել է գրադարանի նոր կայքը, որտեղ «Թվային գրադարան» բաժնում տեղադրվել են Հայ հնատիպ գրքերի տպարանների էլեկտրոնային շտեմարանը, 10 միավոր հմայիլի, 20 միավոր աշխարհագրական քարտեզի, 50 միավոր գրքի թվանշացված տարբերակները, հայ գրքի 1851-1900թթ., 1901-1920թթ. և 1921-1930թթ. մատենագիտական ցանկերը, Եգիպտոսի «Արև» լրագրի մատենագիտության էլեկտրոնային տարբերակի 43 հոդված: Կայքի այցելությունները գրանցող պատուհանում հնարավոր է դիտել կայքից օգտվողների թիվն ու աշխարհագրությունը: Կայքը զարգացնելու ու կատարելագործելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ընդլայնվել է գրադարանի ներքին ցանցը: Թարմացվել է գրադարանի սպասարկող կայանի ծրագրային ապահովումը, ստեղծվել է գրադարանի էլեկտրոնային փոստ. յուրաքանչյուր բաժին ունի առանձին էլեկտրոնային հասցե: Փաստաթղթաշրջանառությունը գրադարանի ներսում հիմնականում կատարվում է էլ. փոստով:

Յուքոմ ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ գրադարանի ընթերցասրահներում հնարավոր է դարձել անվճար, անլար ինտերնետ հասանելիություն: Այս նախաձեռնությամբ Յուքոմ ընկերությունը տեղում ինտերնետից օգտվելու համալիր լուծում է տվել:

Թվայնացման կենտրոնում սքանավորվել  է 334 միավոր գիրք, էջերի ընդհանուր քանակը՝ 72.438:

Ազգային գրադարանում են իրագործվում 10 գրադարանների նրբաթել կոդերի տպագրման աշխատանքները, տպագրվել է 327.000 պիտակ: Շարունակվում են Հայաստանի խոշոր գրադարանների միասնական էլեկտրոնային քարտարանի /ALEPH ծրագրով/ ձևավորման աշխատանքները: Մուտքագրվել է 115.308 միավոր կամ 33.000 անուն գրականություն: Գրադարանի  խնդիրները քննարկվել և լուծում են ստացել տնօրինության և գիտխորհրդի՝ պարբերաբար հրավիրվող նիստերում:

## ՀԱՄԱԼՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համալրման բաժնում հաշվետու տարում համակարգված աշխատանքներ են տարվել  հավաքածուի ընթացիկ և հետադարձ համալրման ուղղությամբ:

2011 թվականին գրադարանի ընդհանուր հավաքածուն համալրվել է 54.630 միավոր գրականությամբ:

Գրադարանի գործող հավաքածուն 2011 թվականին համալրվել է 40.744 միավոր գրականությամբ:

Գործող հավաքածուի պատկերը ըստ լեզուների հետևյալն է՝ հայերեն՝ 1.561.846 միավոր, ռուսերեն՝ 4.416.523 միավոր և օտար լեզուներով՝ 597.221 միավոր:

Հաշվետու տարում գրադարանի պահուստային հավաքածուն համալրվել է 6.326 միավոր գրականությամբ, ելքը կազմել է 45 միավոր: Պահուստային հավաքածուն կազմում է 115.696 միավոր:

Այսպիսով, գրադարանի ընդհանուր հավաքածուն 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.802.157 միավոր գրականություն, որից գործող հավաքածուն՝ 6.575.590 միավոր, պահուստային հավաքա-

ծում՝ 115.696 միավոր, գրքափոխանակության հավաքածում՝ 110.871 միավոր:

Ընթացիկ տարում գրականությունը ստացվել է պարտադիր օրինակի, նվիրատվությունների, բաժանորդագրության, գնման, փոխանակության միջոցով:

Հայրենական և արտասահմանյան հրատարակությունների ենթաբաժնի միջոցով է իրականացվում հավաքածուների համալրումը հանրապետությունում և արտասահմանում հրատարակված տպագիր արտադրանքով: Հաշվետու տարում ենթաբաժնի միջոցով ստացվել է 37.784 միավոր գրականություն, որից 3.397 գրադարանի համար նոր անուն գիրք (2.617 անունը՝ հայրենական հրատարակություններ): 2011թ. հրատարակված գրքերից ստացվել է 1.280 անուն, 2010թ.՝ 953 միավոր: Սփյուռքում տպագրված գրքերից ստացվել է 780 նոր անուն գրքեր, 15 անունը 2011թ. հրատարակություն է:

Հետևողական աշխատանք է տարվել 1 օրինակ գրքերը բազմօրինակ դարձնելու ուղղությամբ: Տարվա ընթացքում 87 անուն 1 օրինակ գրքեր դարձել են բազմօրինակ (40 միավորը՝ պատճենահանման միջոցով):

2011 թվականին գրադարանի համալրողները համագործակցել են 290 հրատարակչությունների և կազմակերպությունների հետ: Ենթաբաժնի միջոցով ձեռք է բերվել 18 անուն թերթ և 67 անուն ամսագիր: Պարբերաբար լրացվել են ենթաբաժնի ընթացիկ այբբենական, նվիրատուների, մեկ օրինակ գրքերի, հրատարակչությունների քարտարանները:

Ընթացիկ տարում պարբերական հրատարակությունները համալրվել են պարտադիր օրինակ, բաժանորդագրություն, նվեր ճանապարհով:

2011թ. գրադարանի մամուլի հավաքածուն համալրվել է հիմնականում պարբերական մամուլի ենթաբաժնի միջոցով: Տեղական մամուլը ստացվել է «Հայմամուլ» գործակալության միջոցով, ռուսական մամուլի բաժանորդագրությունը իրականացվել է «էքսպրեսս պլյուս» և «Պրեսս Ատտաշե» գործակալությունների միջոցով: Հաշվետու տարում բաժա-

նորդագրությամբ ստացվել է 145 անուն պարբերական մամուլ, որից՝ 128 անուն ամսագիր (4-ը՝ տեղական) և 17 անուն լրագիր, որից մեկը՝ տեղական:

Պարտադիր օրինակի ճանապարհով ստացվել է 415 անուն պարբերական (240 ամսագիր, 175 լրագիր ):

Հայ մամուլի միջոցով ստացվել է 44 անուն լրագիր, խմբագրություններից և կազմակերպություններից պարտադիր և նվերի կարգով ստացվում է 152 լրագիր, որից 60-ը մարզային է:

Տեղական հրատարակությամբ պարտադիր և նվերի կարգով ստացվել է 325 անուն ամսագիր, որից 30-ը ռուսերեն է:

Սփյուռքից ստացվել է 60 անուն լրագիր, որից 30-ը ՌԴ-ից:

Նվեր ճանապարհով ստացվել է ՌԴ հրատարակված 80 անուն ռուսերեն ամսագիր: Սփյուռքից ստացվել է 65 անուն հայերեն ամսագիր, արտասահմանից օտար լեզվով՝ 450 անուն ամսագիր:

Բաժանորդագրությամբ ստացվել է 128 անուն ամսագիր, որից 4՝ տեղական: Բաժանորդագրությամբ ստացվել է 17 անուն լրագիր, որից 1՝ տեղական:

Հայերեն լեզվով ստացվել է 61 նոր անուն ամսագիր, ռուսերեն՝ 38, իսկ օտար լեզվով՝ 206: Հայերեն լեզվով ստացվել է 32 նոր անուն լրագիր, ռուսերեն՝ 26:

2011 թվականին ընդլայնվել են կապերը Ռուսաստանի և արտասահմանի երկրների մի շարք հանդեսների խմբագրությունների և հրատարակչական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ:

Գրադարանի ֆոնդերը ընթացիկ տարում համալրվել են 273 անուն լրագրով և 1048 անուն ամսագրերով:

Հաշվետու տարում որպես պարտադիր օրինակ ստացվել է 13,535 միավոր գրականություն, որից 10,221 միավոր գիրք, 240/2714 ամսագիր և 175/600 լրագիր:

Հաշվառման և գրանցման ենթաբաժնում են կենտրոնացված գրադարան մուտք գործած գրականության հաշվառման, գրանցման և

համապատասխան հավաքածուներ առաքելու աշխատանքները: Ընթացիկ տարում ենթաբաժնում մուտք է արվել 54.630 միավոր գրականություն:

Գրականության հաշվառումը և գրանցումը կատարվել է ըստ գրականության արժեքի, միավորների, տեսակների, գիտության ճյուղերի և լեզուների:

Տարվա ընթացքում կազմվել է 877 ուղեկցող փաստաթուղթ (ուղեգիր) և գրականությունը հանձնվել է գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին:

Ցուցակագրվել և պահուստային հավաքածուին է հանձնվել 2.069 միավոր գիրք, գրքափոխանակության հավաքածուին՝ 8.952 միավոր գիրք: Մատյաններում փոխվել է 3.500 միավոր գրքի ուղղություն: Ընթացիկ տարում ենթաբաժնում գույքագրվել է 29.600 միավոր գրականություն:

Հաշվետու տարում գրադարանի պահուստային հավաքածուն ստացել է 6.326 միավոր գրականություն, որից գիրք 2.000 միավոր, կերպարվեստի նյութեր 42 միավոր, նոտային-երաժշտական գրականություն 27 միավոր, 2.296 միավոր ամսագիր և 386 կազմ լրագիր: Գրքափոխանակության բաժնից ստացվել է 1.575 միավոր հանդես:

Հաշվետու տարում պահուստային հավաքածուի ստացումները կազմել են 6.326 միավոր, պահեստից գրադարանի տարբեր հավաքածուներ տրվել է 45 միավոր գրականություն:

Այսպիսով, 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանի պահուստային հավաքածուն կազմել է 115.696 միավոր գրականություն:

## ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գրադարանի գրքափոխանակության գործընթացները իրականացվում են գրքափոխանակության և զարգացման ծրագրերի բաժնի միջոցով:

Առ 01.01.2012թ. գրքափոխանակության հավաքածուն կազմել է 110.871 միավոր գրականություն, որից հայերեն՝ 57.112 միավոր, այլ լեզուներով՝ 53.759 միավոր:

Հաշվետու տարում հավաքածուն համալրվել է 9.235 միավոր գրականությամբ, որից գիրք՝ 8.952 միավոր, ամսագիր՝ 283 միավոր, մանր նյութեր՝ 10 միավոր:

Գրքափոխանակության հավաքածուի ելքը 2011 թվականին կազմել է 14.351 միավոր գրականություն: Գրադարանից դուրս տրվել է 8.866 միավոր, գրադարանի բաժիններին՝ 4.667 միավոր, որից 62-ը՝ հնատիպ, հազվագյուտ և անձեռնմխելի գրականության բաժին, 2.599 միավոր ուղարկվել է գլխավոր գրապահոց, պահուստային գրականության ենթաբաժնին՝ հայերեն ամսագրեր 1.575 միավոր, 818 միավոր ՀՀ մշակույթի նախարարի 30.05.2011թ. N 271-Ա հրամանով գրադարանից դուրս գրվել:

Հաշվետու տարում գրադարանի գրացուցակներում ստուգվել և շիֆրավորվել է 5.000 քարտ:

Ռուսերեն հավաքածուից ստուգվել և գլխավոր գրապահոց է ուղարկվել 1.603 միավոր մինչև 1920թ. հրատարակված գրականություն:

2011 թվականին գրքափոխանակության հավաքածուն ստուգվել է և առանձնացվել է 818 միավոր քայքայված գրականություն՝ դուրս գրելու նպատակով:

ՄԱԿ-ի նյութերից Հայաստանի Ազգային գրադարանը Կոտայքի մարզի գրադարաններին հանձնել է 333, Սյունիքի մարզի գրադարաններին՝ 293, Լոռու մարզի Ալավերդու Մշակույթի կենտրոնի գրադարանին՝ 23 միավոր գրականություն: Ընդամենը՝ 649 միավոր:

Հաշվետու տարին հագեցած էր ՀՀ մարզեր այցելության առումով: Շրջիկ գրադարանով կատարվեցին այցեր ՀՀ և ԼՂՀ և գրադարաններին նվիրվեց 4.376 միավոր գրականություն:

«Փոքր Միեր» ռազմական կրթահամալիրին տրվել է 87 միավոր գրականություն, Կոտայքի մարզի 8 գրադարանների նվիրվել է 307, Սյունիքի մարզի 15 գրադարանների՝ քաղաքային, մարզային,

զորամասային և գյուղական՝ 928 միավոր, Նոր Նորքի համայնքային գրադարանին ՝ 24 միավոր, ԼՂՀ -ի գրադարաններին՝ 1.887 միավոր, Արարատի մարզի 6 գրադարանների՝ 425 միավոր, Վայոց ձորի մարզի 7 գրադարանների՝ 718 միավոր գրականություն:

2011 թվականին 858 միավոր գրականություն է հատկացվել սփյուռքի հայկական համայնքներին:

Արտասահմանյան գրադարաններից, կազմակերպություններից և անհատներից 2011 թվականին ստացվել է 1.263 միավոր գրականություն, որից 814 գիրք, 429 ամսագիր և 20 կազմ թերթ: Հայաստանյան գրքափոխանակությամբ ստացվել է 215 միավոր գրականություն:

Գրքափոխանակության շրջանակներում գրքերի նոր ցուցակներ են ստացվել Իրանի, Բելառուսի, Բուլղարիայի, Լեհաստանի, Իրանի, Ռուսաստանի, Չեխիայի ազգային գրադարաններից, ՌԴ Պետական և Գիտությունների ազգային ակադեմիայի գրադարաններից:

ՀԱԳ-ը իր հերթին գրքափոխանակության ցուցակներ է առաջարկել այդ գրադարաններին:

2011 թվականին Հայաստանի Ազգային գրադարանը համագործակցել է 42 երկրների 162 գրադարանների, կազմակերպությունների և անհատների և ՀՀ-ում գործող 21 դեսպանությունների հետ:

2011 թվականին նոր կապեր են հաստատվել Սիրիայի «Քրիստափոր» գրադարանի, Կիրգիզիայի ազգային գրադարանի, Ղազախստանի ազգային ակադեմիայի գրադարանի հետ:

2011 թվականին արտաքին կապերի և զարգացման ծրագրերի ենթաբաժինը զարգացրել է կապերը Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի, Ուզբեկստանի, Բելառուսի, Իրանի, Կիպրոսի, Թուրքիայի, Հունաստանի, Կանադայի հայ համայնքների հետ: Համագործակցության արդյունքում հայ համայնքներից ստացվել են 1.984 միավոր գիրք, ամսագիր և այլ կրիչներ: Նյութեր են տրամադրվում համայնքներին՝ տեղերում մշակութային կյանքը կազմակերպելու համար: Կազմվել և մշակվում է գրադարանային գործի զարգացման ծրագիր:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժինը 2011 թվականին համալրման բաժնից ստացել է 50.794 միավոր գրականություն, որից՝ 17.394 գիրք, 19.807 ամսագիր, 214 շարունակվող հրատարակություններ, 1.888 կազմ թերթ, 6.102 սեղմագիր, 448 ատենախոսություն, 310 էլեկտրոնային կրիչ (DVD, CD), 1.408 խմբային մշակման և մանր նյութեր և 3.223 ոչ գրքային հրատարակություններ:

Հաշվետու տարում հայերեն գրականության մշակման ենթաբաժինը ստացել է 21.398 միավոր գրականություն, որից՝ 9.954 գիրք, 6.691 ամսագիր, 1.526 կազմ թերթ, 1.704 միավոր ոչ գրքային հրատարակություններ, 148 CD, 17 DVD և 710 միավոր մանր նյութ, 358 սեղմագիր, 290 ատենախոսություն:

Գրքերից 2.729 միավոր՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին:

Ստացված գրականությունը մշակվել է և այբբենական ծառայողական գրացուցակում տեղադրվել է 4.080 քարտ, ընթերցողական գրացուցակում՝ նույնքան քարտ: Խմբագրվել է այբբենական գրացուցակի 12 արկղ:

Դասակարգվել է 2.729 միավոր գրականություն: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 3.800 քարտ, նույնքան քարտ տեղադրվել է ընթերցողական գրացուցակում: Խմբագրվել է կարգային գրացուցակի 22 արկղ: Կատարվել է 918 քարտերի անճշտությունների ուղղում:

Տարվա ընթացքում մշակվել է 6.691 ամսագիր և 1.526 կազմ թերթ: Ամսագրերից 2.341 միավոր՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին: Մշակվել է 61 նոր անուն ամսագիր:

Խմբագրվել է գրացուցակի 12 արկղ:

522 կազմ թերթ՝ որպես առաջին օրինակ, ուղարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին: Մշակվել է 36 նոր անուն թերթ:

Հաշվետու տարում ստացվել է 17.657 միավոր ռուսերեն գրականություն, որից 4.585 միավոր գիրք, 11.196 միավոր ամսագիր, 270 կազմ թերթ, 214 միավոր շարունակվող հրատարակություններ, 31 CD, 376 խմբային մշակման և մանր նյութեր, 543 միավոր սեղմագիր, 138 միավոր ատենախոսություն և 304 միավոր ոչ գրքային հրատարակություններ:

Գրքերից 3.332 միավորը մշակվել է որպես առաջին օրինակ: Ստացված ամբողջ գրականությունը մշակվել է և այբբենական ծառայողական գրացուցակում տեղադրվել է 5.000 քարտ, նույնքան քարտ տեղադրվել է ընթերցողական գրացուցակում:

Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 70, ընթերցողական գրացուցակի 73 արկղ:

Դասակարգվել է 3.858 միավոր գրականություն: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 5.100 քարտ, նույնքան էլ՝ ընթերցողական գրացուցակում: Կատարվել է 490 գրքերի քարտերի անճշտությունների ուղղում: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 55, ընթերցողական գրացուցակի 40 արկղ:

2011թ. մշակվել է 11.196 միավոր ամսագիր, որից 10.374-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Մշակված ամսագրերից 39-ը նոր անուն են գրադարանի համար:

Մշակվել է 233 կազմ թերթ, խմբագրվել է ամսագրերի և թերթերի գրացուցակի 86 արկղ:

Տարվա ընթացքում ստացվել է 138 ատենախոսություն և 543 սեղմագիր, 376 մանր նյութ, 304 ոչ գրքային հրատարակություն:

2011 թվականի ընթացքում ստացվել է 11.739 միավոր գրականություն այլ լեզուներով, որից 2.855 գիրք, 1.920 ամսագիր, 92 կազմ թերթ, 1.238 միավոր ոչ գրքային հրատարակություններ, 108 CD, 6 DVD, 322 խմբային և մանր նյութ, 5.201 սեղմագիր, 20 ատենախոսություն:

Գրքերից 2.375-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Այբբենական ծառայողական և ընթերցողական գրացուցակներում տեղադրվել է 4.700-ական քարտ: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 9, ընթերցողական գրացուցակի նույնքան արկղ:

Ստացված ամբողջ գրականությունը դասակարգվել է: Կարգային ծառայողական գրացուցակում տեղադրվել է 5.000 քարտ, նույնքան՝ ընթերցողական գրացուցակում: Խմբագրվել է ծառայողական գրացուցակի 40, ընթերցողական գրացուցակի 36 արկղ:

Հաշվետու տարում ստացվել է 1.920 ամսագիր և 92 կազմ թերթ: Ամսագրերից 1.723-ը ուղարկվել է գլխավոր գրապահոց: Մշակվել է 206 նոր անուն ամսագիր: Խմբագրվել է գրացուցակի 12 արկղ:

Մշակվել է 92 կազմ թերթ, որից 87 կազմը ուղարկվել է գրապահոց:

2011 թվականին նաև շարունակվել են գլխավոր գրապահոցի հավաքածուի անվանական վերահաշվառման հետ կապված աշխատանքները: Վերահաշվառվել է 322.245 միավոր գրականություն, որից 115.308 միավոր գիրք, 197.176 միավոր ամսագիր և 9.861 կազմ թերթ:

## ՖՈՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Գրադարանի գործող հավաքածուն 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 6.575.590 միավոր:

2011 թվականին գլխավոր գրապահոցի հավաքածուն համալրվել է 36.044 միավոր նոր ստացված գրականությամբ, որից 13.015 գիրք, 21.710 ամսագիր, 1.319 կազմ լրագիր:

Այսպիսով, 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գլխավոր գրապահոցի հավաքածուն կազմել է 5.845.617* միավոր գրականություն, ինչը կազմում է գրադարանի գործող հավաքածուի 88,8%-ը:

---

* **Ծանոթ՝.** Գլխավոր գրապահոցի հայերեն գրքերի, ամսագրերի և թերթերի հաշվառումն ավարտելուց հետո 2012թ. հունվարի 1-ի դրությամբ բաժնի հավաքածուն կազմել է 5.845.617 միավոր

Ստացված գրականությունը գրանցվել է գրապահոցի համապատասխան մատյաններում, դասդասվել է և տեղադրվել դարակների վրա:

Հաշվետու տարում գլխավոր գրապահոց մուտք է գործել 125.077 պատվիրաթերթիկ, բավարարվել է 122.682 պատվեր, 14.069 պատվեր զբաղված է եղել ընթերցասրահներում և բավարարվել է համապատասխան տեղերում, 2.340 մերժում տրվել է գրականությունը մեկ օրինակ լինելու պատճառով և բավարարվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնում: «Գրադարանում չկա» 55 մերժումները տրվել են գրադարանում չեղած պարբերականների պատվիրաթերթիկներին:

2011թ. գլխավոր գրապահոցում դասդասվել և դարակների վրա է տեղադրվել է 254.961 միավոր գրականություն, որից 36.044 միավոր՝ նոր ստացումները, 122.682 միավոր՝ բաժնի վերադարձը, 88.107 միավոր՝ ALEPH ծրագրով մուտքագրման համար տրված գրականությունը և 8.128 միավոր կազմատուն և խնամքի բաժին հանձնած և հետ բերված գրականություն:

Տարվա ընթացքում կատարվել է 700.000 միավոր գրականության ստուգում-տեղաշարժ:

Շարունակվել են գլխավոր գրապահոցի հավաքածուի անվանական վերահաշվառման աշխատանքները:

2011թ. ընթացքում ALEPH ծրագրի միջոցով վերահաշվառվել է 88.107 միավոր գրականություն, որից հայերեն՝ 78.063, ռուսերեն՝ 10.044 միավոր: Մամուլի ենթաբաժնում վերահաշվառվել է 9.861 կազմ թերթ և 197.076 միավոր ամսագիր: Հաշվետու տարում գրապահոցի հավաքածուից վերահաշվառվել է 295.044 միավոր գրականություն:

Գրապահոցի հավաքածուի անվանական վերահաշվառման ընթացքում գրադարանի տարբեր բաժիններ է հանձնվել 1.164 միավոր գրականություն, որից հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի հնատիպ և հազվագյուտ գրականության ենթաբաժնին է հանձնվել հնատիպ 11 բնօրինակ գիրք (1 միավոր հայերեն, 10 միավոր ռուսերեն), 282 միավոր գիրք հանձնվել է նույն բաժնի եզակի

հավաքածուների ենթաբաժնին, 420 միավոր տրվել է նույն բաժնի արխիվային գրականության ենթաբաժնին: Մինչև 1951թ. տպագրված 400 միավոր գիրք նույնպես հանձնվել է վերոնշյալ ենթաբաժնին: Նոտային-երաժշտական գրականության բաժնին հանձնվել է 50 միավոր գրականություն: Բաժնից դուրս գրվող գրականության համար կազմվել է 11 արձանագրություն, որոնք հաստատվել ու կնքվել են գրադարանի տնօրենի և ստորագրվել են բաժինների վարիչների կողմից: Հաշվետու տարում վերականգնվել է 58 գրքի և հայերեն մեկ թերթի պակասավոր 3.520 էջ: Տարվա ընթացքում հետևողական աշխատանք է տարվել հավաքածուների պահպանման և վերականգնման ուղղությամբ: Մաքրվել և փոշեհանվել է 750.000 միավոր գրականություն: Կազմատուն և գրքի խնամքի բաժին է ուղարկվել և հետ բերվել 8.128 միավոր գրականություն, որից ախտահանվել է 4.000 միավորը:

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի հավաքածուները 2011թ. համալրվել են 7.243 միավոր գրականությամբ, որից 3.737 գիրք, 2.540 ամսագիր, 569 կազմ թերթ, 105 միավոր նոտային հրատարակություններ և 4 միավոր ոչ գրքային հրատարակություններ, Ղորղանյանի արխիվը՝ 288 միավոր:

Ըստ լեզուների ստացված գրականության պատկերը հետևյալն է՝ հայերեն 6.277 միավոր, ռուսերեն՝ 762 միավոր, այլ լեզուներով՝ 198 միավոր, հայատառ թուրքերեն՝ 6 միավոր:

Ստացված գրականությունը համեմատվել է բաժնի քարտարանների հետ, գրանցվել է, դասդասվել և տեղադրվել համապատասխան հավաքածուներում:

Հնատիպ, հազվագյուտ գրականության ենթաբաժնի հավաքածուն 2011 թվականին համալրման բաժնից ստացել է 435 միավոր գրականություն, որից 12 միավոր հնատիպ գիրք (1 միավոր հայերեն, 10 միավոր ռուսերեն, որից 3-ը նոր անուն, 1 միավոր օտարալեզու նոր անուն):

2011թ. ստացվել է 403 միավոր 1801-1850թթ. տպագրված գրքեր, որից հայերեն 402 միավոր (1-ը նոր անուն), ռուսերեն մեկ միավոր նոր անուն, հայերեն հազվագյուտ 4 միավոր, որից 3-ը՝ արծաթյա հուշամեդալ, հայատառ թուրքերեն՝ 6 միավոր, օտարալեզու հայագիտական՝ 10

միավոր: Գրքերը գրանցվել են համապատասխան մատյաններում, տրվել են համակարգչային մուտքագրման և տեղադրվել դարակներում:

2011թ. սկսվել է 1826-1850թթ. տպագրված ռուսերեն գրականության մուտքագրումը ALEPH ծրագրով: Մուտքագրվել է 77 անուն, 110 միավոր գրականություն:

Ենթաբաժնի հավաքածուից 70 միավոր գրքի կազմ է վերականգնվել. 40-ը անհատի կողմից, 30-ը՝ գրքի վերականգնման բաժնի կողմից: 6 միավոր տրվել է Մատենադարան՝ լիարժեք վերականգնման նպատակով:

Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 5.541 միավոր գրականություն: Գրադարանի տնօրենի N 132-Ա § 3 հոկտեմբերի 14-ի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կատարվել է հնատիպ գրքերի անվանական ստուգում-հաշվառում:

Հայկական տպագրության 500-ամյակի շրջանակներում կազմակերպված Վենետիկյան ցուցահանդեսի համար հայերեն հնատիպ 9 միավոր գիրք և 1 միավոր քարտեզ նկարվել է, կշռվել, կազմվել է ապահովագրության և նյութի մասին արձանագրություն: Բոլոր ուղեկցող փաստաթղթերը թարգմանվել են անգլերեն, հաստատվել են ՀԱԳ տնօրենի և ՀՀ մշակույթի նախարարի կողմից, հանձնվել են պատասխանատուին՝ Վենետիկ տեղափոխելու և ցուցադրելու նպատակով: Ամստերդամում ապրիլին նախատեսվող ցուցահանդեսի համար ուսումնասիրվել են տեղում պահպանվող հայերեն գրքերի ցուցակները՝ ստացված Ամստերդամի քաղավորական գրադարանից: Համեմատվել ու առանձնացվել է 49 միավոր գիրք և 1 միավոր քարտեզ, որոնք Ամստերդամում չկան: Ցանկից 28 գրքեր վերականգնման կարիք ունեն: Ամստերդամի կողմի առաջարկով նշված միավորները պետք է վերականգնվեն տեղում՝ ցուցադրվելուց առաջ: Կատարվել է 20 միավորի մանրամասն անձնագրավորումը, գրքերը կշռվել են, որոշվել է յուրաքանչյուրի ապահովագրական գումարը: Պարբերաբար կատարվել է հնատիպ և հազվագյուտ գրականության ֆոնդի ստուգում և փոշեհանում: Հուլիսից սկսվել է Ազգային գրադարանի հնատիպ գրքերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 72 միավոր հնա-

տիպ գիրք՝ 21.593 էջով: 10 միավոր հիմայիլ տեղադրվել է գրադարանի կայք-էջում Greenstone ծրագրով:

Արխիվային գրականության հավաքածուն հաշվետու տարում համալրվել է 5.784 միավոր գրականությամբ, որից գիրք 2.744 միավոր, հանդես 2.412 միավոր, լրագիր 522 կազմ, նոտային հրատարակություն 105 միավոր, դիդակտիկ նյութ 1 միավոր: Ստացված գրքերից արխիվային է 2.648 միավորը, հայերեն փոքրածավալ՝ 81-ը, ռուսերեն փոքրածավալ՝ 15 միավորը: 2011թ. վերսկսվել է արխիվային գրականության հավաքածուի ստուգում-տեղաշարժը: Ստուգվել և փոշեհանվել է 21.601 միավոր գիրք, առանձնացվել է 225 միավոր գիրք՝ կազմատուն տանելու համար: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 6.187 միավոր գիրք: 2011թ. ստացված 2.412 հանդեսները ընթացիկ ստացումներ են, 1.581 միավորը տեղական հրատարակություններ են, 845 միավորը ստացվել է սփյուռքից և 34 միավորը՝ ԼՂՀ-ից: Լեզվական պատկերը հետևյալն է. 2.341 միավոր հայերեն, 71 միավոր օտարալեզու: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 7.189 միավոր ամսագիր: Կազմատուն է տարվել 111 կազմ, 834 միավոր: Գրապահոցի բազմահարկ մասնաշենքի 7-րդ հարկ տեղափոխված արկղերից 65-ը բացվել է և գրադարակների վրա տեղադրվել է մոտ 2.000 միավոր ամսագիր: Պարբերաբար կատարվել է հավաքածուի ստուգում-տեղաշարժ, որի ընթացքում առանձնացվել են կրկնօրինակները և նորոգվել են քայքայված միավորները:

Պարբերաբար լրացվում է հանդեսների օջախային և մեկ օրինակների քարտարանը: 2011 թվականին բաժնում ստացվել է 522 կազմ թերթ, որից 241 կազմը տեղական հրատարակություններ են, 232 կազմ ստացվել է սփյուռքից և 47 կազմ՝ ԼՂՀ-ից, առանց տեղի հիշատակության՝ 2 կազմ: Թերթերը գրանցվել են, կոմպլեկտավորվել և տեղադրվել դարակների վրա:

Վերականգնվել են 85 թերթի կռնակները: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 1.190 կազմ լրագիր:

Եզակի հավաքածուների ենթաբաժնի հավաքածուն 2011 թվականին համալրվել է 736 միավոր գրականությամբ, որից գիրք՝ 561 միա-

վոր, ամսագիր՝ 128 միավոր, լրագիր՝ 47 կազմ: Գրքերի լեզվական պատկերը հետևյալն է. հայերեն՝ 161, ռուսերեն՝ 312, օտարալեզու՝ 88 միավոր: Ամսագրերից հայերեն է 6, ռուսերեն՝ 99, օտարալեզու՝ 23 միավոր: Լրագրերից հայերեն է 5, ռուսերեն՝ 37, օտարալեզու՝ 5 կազմ: Ավարտվել է Մանանդյանի հավաքածուի գրացուցակների և գույքամատյանների համեմատման աշխատանքը:

2011 թվականին սկսվել են հավաքածուների գրքերի մատենագիտական նկարագրության աշխատանքները: Լեոյի անձնական գրադարանից նկարագրվել է 3.554 գիրք, 8 միավոր քարտեզ: Ներկայումս կազմվում են օժանդակ ցանկերը: Կատարվել է հավաքածուների 20.208 միավոր գրականության ստուգում-տեղաշարժ: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 4.346 միավոր գրականություն:

Էլեկտրոնային մուտքագրման է տրվել 2.890 միավոր գրականություն՝ Լեոյի հավաքածուից հայերեն 1.540 միավոր, Մանանդյանի հավաքածուից՝ հայերեն և ռուսերեն 1.350 միավոր գիրք: Տարվա ընթացքում կոմպլեկտավորվել և տեղադրվել է 20.453 միավոր գրականություն:

Նոտային-երաժշտական գրականության բաժնի հավաքածուն 2011թ. համալրվել է 704 միավոր գրականությամբ, որից 68 գիրք, 548 նոտային հրատարակություն, 54 էլեկտրոնային կրիչ, 24 ձայնապնակ, 2 կազմ (8 միավոր) թերթ և 2 ձայներիզ:

Կատարվել է ձայնապնակների ստուգում, արձանագրվել է 10.616 միավոր ձայնապնակ:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնի հավաքածուն 2011 թվականին համալրվել է 4.176 միավոր գրականությամբ, որից գիրք և ալբոմ 574, ամսագիր 661, քարտեզ 41, ատլաս 16, ազդագիր 275, բացիկ 214, բուկլետ 392, դրոշմանիշ 763, պաստառ 78, հրավիրատոմս 396, օրացույց 92, մանր նյութ 354, վերատպություն 2, լուսանկար և նկար 56, ծրար 239, CD 5, դիդակտիկ նյութ 6, հուշամեդալ 2, կրծքանշան 1, էջանիշ 9: Ըստ լեզուների պատ-

կերը հետևյալն է՝ հայերեն՝ 1.567 միավոր, ռուսերեն և այլ լեզուներով՝ 2.609 միավոր:

Տպագիր արտադրանքի վերականգնման բաժինը 2011թ. շարունակել է տպագիր արտադրանքի վերականգնման, ախտահանման, հիվանդ, բորբոսնած միավորների հայտնաբերման և բուժման աշխատանքը: Առանձնակի ուշադրություն է ցուցաբերվել հնատիպ գրքերի նկատմամբ:

2011թ. ընթացքում ախտահանվել է 21.240 թերթ-միավոր, վերականգնվել է 22.920 թերթ-միավոր:

Կատարվել է 13.970 գծամետրի վրա տեղադրված հավաքածուի ստուգում, բորբոսից մաքրվել է 95 միավոր գրականություն: Կատարվել է 518 կաշեկազմ գրքերի կազմի փափկեցում:

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Հաշվետու տարում գրադարանի ընթերցողները սպասարկվել են գիտաշխատողների, ընդհանուր, ընթացիկ մամուլի, ՄԱԿ-ի ավանդապահ գրականության, սեղմագրերի և ատենախոսությունների, նոտային-երաժշտական գրականության, կերպարվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների, հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության, տեղեկատու-մատենագիտական և գրադարանագիտական գրականության մասնագիտացված ընթերցասրահներում, տեսողության խնդիրներ ունեցողների համար նախատեսված «Արև» սրահում, իրավաբանական տեղեկատվության կենտրոնում, ինտերնետի ազատ մուտքի սրահում:

Գրադարանում ընթերցողների գրանցումն ու հաշվառումը կատարվում են էլեկտրոնային տարբերակով:

Ընթերցողական տոմսերի փոխանակման աշխատանքները շարունակվում են:

2011 թվականի ընթացքում ընթերցողների միասնական քարտարանում գրանցվել է 3.340 մարդ, որից վերագրանցվել է 783-ը: 2.557

ընթերցող առաջին անգամ ընթերցողական տոմս է ստացել: Միասնական քարտարանում 2012թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված է 12.537 ընթերցող:

Գրադարանի միասնական քարտարանում գրանցված ընթերցողների կազմի 69%-ը սովորողներ են:

Ընթերցողների կազմի 72%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:

*Ընթերցողների հաճախումները*

Հաշվետու տարում գրադարանի ընթերցողների հաճախումների թիվը կազմել է 271.729, որից ըստ բաժինների`

| | |
|---|---|
| Սպասարկման բաժին | 257.848 |
| Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակութ. | 2.040 |
| Նոտային-երաժշտական գրականության | 1.860 |
| Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության | 2.534 |
| Տեղեկատու-մատենագիտական գրակ. | 1.394 |
| Ինտերնետ սրահ | 2.188 |
| Բաժնույթների բաժին | 3.865 |

*Գրքատացքը*

2011 թվականին գրադարանի գրքատացքը կազմել է 1.583.811 միավոր գրականություն: Ըստ առանձին ընթերցասրահների գրքատացքի պատկերը հետևյալն է.

| | |
|---|---|
| Սպասարկման բաժին | 1.521.123 միավոր |
| Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակութ. | 16.800 միավոր |

| | |
|---|---|
| Նոտային-երաժշտական գրականության | 2.250 միավոր |
| Տեղեկատու-մատենագիտական գրականության | 12.285 միավոր |
| Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրակ. | 6.328 միավոր |
| Ինտերնետի ազատ մուտքի   սրահ | 7.658 միավոր |
| Բաժնույթների բաժին | 17.367 միավոր |

*Գրքատացքի պատկերը ըստ լեզուների հետևյալն է.*

| | | |
|---|---|---|
| Հայերեն | 999.166 միավոր | կամ 63, % |
| Ռուսերեն | 460.061 միավոր | կամ 29,2 % |
| Այլ լեզուներով | 124.584 միավոր | կամ 7,8 % |

*Գրականության տացքը ըստ գիտության ճյուղերի հետևյալ պատկերն ունի.*

| | | |
|---|---|---|
| Հասարակական – քաղաքական գրակ. | 425.356 միավոր | (26,8%) |
| Բնական գիտություններ, բժշկություն | 210.818 միավոր | (13,4%) |

| | | |
|---|---|---|
| Տեխնիկական, գյուղատնտ. և տնտեսագիտ. | 384.240 միավոր | (24,2%) |
| Մշակույթ, ֆիզկուլտուրա, սպորտ | 239.936 միավոր | (15,2%) |
| Բանասիրություն,գեղարվեստական գրակ. | 323.461 միավոր | (20,4%) |

Սպասարկված գրականության մեծ մասը՝ 26,8%-ը՝ հասարակական-քաղաքական գրականություն է:

Գրադարանի հաճախումների 94,8%-ը կազմում են սպասարկման բաժնի ընթերցասրահների հաճախումները:

Սպասարկման բաժնի հաճախումները՝ 257.848, ըստ առանձին ընթերցասրահների՝

| | |
|---|---|
| Գիտաշխատողների ընթերցասրահ | 80.996 |
| Ընդհանուր ընթերցասրահ | 117.602 |
| Ընթացիկ մամուլի ընթերցասրահ | 54.210 |
| ՄԱԿ-ի ավանդապահ գրականության սրահ | 1.474 |
| Իրավաբանական տեղեկատվության կենտրոն | 303 |
| «Արև» ընթերցասրահ | 189 |
| Ատենախոսությունների և սեղմագրերի ընթերցասրահ | 3.074 |

Սպասարկման բաժնի գրքատացքը հաշվետու տարում կազմել է 1.521.123 միավոր գրականություն, ինչը կազմում է գրադարանի ընդհանուր տացքի 95%-ը:

Ըստ առանձին ընթերցասրահների տացքի պատկերը հետևյալն է՝

| | |
|---|---|
| Գիտաշխատողների ընթերցասրահ | 456.834 միավոր |
| Ընդհանուր ընթերցասրահ | 648.788 միավոր |
| Ընթացիկ մամուլի ընթերցասրահ | 400086 միավոր |
| ՄԱԿ-ի ավանդապահ գրականության սրահ | 7.575 միավոր |
| Իրավաբանական տեղեկատվության կենտրոն | 935 միավոր |
| «Արև» ընթերցասրահ | 210 միավոր |
| Ատենախոսութ. և սեղմագրերի ընթերցասրահ | 6.695 միավոր |

Հաշվետու տարում տացքակետերի միջոցով գլխավոր գրապահոց է ուղարկվել 125.077 պատվեր: Բավարարվել է 108.613 պատվեր, մերժվել է 16.464-ը, որից 16.409-ը զբաղված է եղել ընթերցասրահներում, և ընթերցողները գրականությունը տեղում կարդալու հնարավորություն են ունեցել: 2.340 գրքի պատվեր մեկ օրինակ լինելու պատճառով սպասարկվել է հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնում: 55 պատվիրաթերթիկ մերժվել է գրադարանում չլինելու պատճառով: Վերջին մերժումները մեծ մասամբ վերաբերում են այն ամսագրերին, որոնք գրադարանը չի ստացել, կամ հատորային հրատարակություններին, որոնց այս կամ այն հատորը կամ պրակը գրադարանում բացակայում են, և ընթերցողը պատվիրել է առանց գրացուցակից օգտվելու:

Գրադարանում պարբերաբար կատարվում է մերժումների վերլուծություն, որի նպատակը առավել մեծ պահանջարկ ունեցող գրքերի երկրորդ օրինակի ձեռքբերումն է:

2011 թվականի ընթացքում կատալոգների ենթաբաժնում ընթերցողներից ընդունվել է 92.754 պատվիրաթերթիկ, կատարվել է 8.280 պատվերների մատենագիտական տվյալների ճշտում ծառայողական գրացուցակներում: Տարվա ընթացքում սպասարկման բաժնի բոլոր օղակներում ընթերցողներին տրվել է 27.615 բանավոր տեղեկանք, 3.765 ընթերցողի տրվել է խորհրդատվություն գրացուցակի մոտ: ALEPH ծրագրի որոնողական համակարգից օգտվել է 5.765 ընթերցող:

## ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

2011 թվականին գրադարանի բոլոր բաժնույթներից օգտվել է 773 բաժանորդ, որից՝

| | |
|---|---|
| Միջգրադարանային | 91 |
| Անհատական | 314 |
| Ներքին | 368/57 |

Հաշվետու տարվա ընթացքում գրադարանի բոլոր բաժանորդներին տրվել է 17.367 միավոր գրականություն:

Միջգրադարանային բաժնույթի 91 բաժանորդներին տրվել է 1.243 միավոր գրականություն: Բաժանորդների թվում են 20 մարզային և համայնքային գրադարաններ:

2011 թվականին ևս շարունակվել են պայմանագրերի կնքման աշխատանքները Հայաստանի բուհական գրադարանների հետ: Նոր պայմանագրեր են կնքվել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, հանրապետական գիտաբժշկական գրադարանի, Վ.

Բրյուսովի անվ. լեզվաբանական համալսարանի, «Մաքուր երկաթ» գործարանի և այլ հաստատությունների հետ: Այդ պայմանագրերի արդյունքում գրադարան է մուտքագրվել 231.000 դրամ:

Միջազգային միջգրադարանային բաժնույթով ԱՊՀ երկրներ է ուղարկվել 110 պատվեր, որից բավարարվել է 52-ը, 38 պատվեր մերժվել է, անպատասխան է մնացել 19 պատվեր:

ԱՊՀ գրադարաններից ստացված գրականության դիմաց հաշվապահություն է մուծվել 105.258 դրամ:

2011թ. ավելի են ամրապնդվել կապերը Ռուսաստանի պետական գրադարանի հետ:

ՀԱԳ-ը պատվերներ է ստացել Ռուսաստանի պետական գրադարանից, Անգլիայից, ԱՄՆ Օհայո նահանգից, Իսրայելից: 5 պատվերից բավարարվել է 4-ը, 1-ը մերժվել է Հայաստանի գրադարաններում պահանջված գիրքը չլինելու պատճառով:

Միջգրադարանային բաժնույթի միջոցով սպասարկված գրքերից պատճենահանվել և վերականգնվել են գլխավոր գրապահոցում եղած որոշ գրքերի պակասավոր էջերը:

Անհատական բաժնույթով 314 բաժանորդներին տարվա ընթացքում տրվել է 2.378 միավոր գրականություն և հաշվապահություն է մուծվել 497.500 դրամ:

Ներքին բաժնույթի 368 բաժանորդներին 2011թ. տրվել է 13.746 միավոր գրականություն:

Մեկ օրինակ լինելու պատճառով մերժված գրքերը ցուցակագրվել են և հանձնվել համալրման բաժին՝ ևս մեկ օրինակ ձեռք բերելու համար:

2011 թվականին ՀԱԳ-ի միջգրադարանային և անհատական բաժնույթներով գրադարանի հաշվապահություն է մուծվել ընդհանուր հաշվով 833.758 դրամ գումար:

## ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայագիտական և երկրագիտական քարտարանների ենթաբաժնում քարտագրվում են Հայաստանի պարբերական մամուլում տպագրված՝ հայ ժողովրդի և Հայաստանի մասին գիտության բոլոր բնագավառներին վերաբերող հրապարակումները, վարվում են անձնագրավորված քարտարաններ և կատարվում է մատենագիտական սպասարկում: Ենթաբաժնում կազմվում են թեմատիկ, պարբերական մամուլի բովանդակության մատենագիտություններ և կենսամատենագիտություններ:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել է 15.271 միավոր թերթ, 384 միավոր ամսագիր և 313 միավոր գիրք: Կազմվել է հոդվածների նկարագրության 69.061 քարտ, ինդեքսավորվել է 69.061 քարտ, կրկնակվել է 5.841 քարտ, դասավորվել և տեղադրվել է 69.061 քարտ: «Պերսոնալիա» քարտարանի համար նկարագրվել է 6.131 քարտ: Հետադարձ համալրմամբ կազմվել է 3.280 քարտ: Խմբագրվել է քարտարանների 127 արկղ, վերադասավորվել է 6.989 քարտ:

2011 թ. շարունակվել են աշխատանքները «Ալեքսանդր Մյասնիկյան», «Հայկական հարց և հայոց ցեղասպանություն», «Եղիշե Չարենց», «Կարեն Դեմիրճյան» մատենագիտությունների խմբագրման և լրացման ուղղությամբ: Խմբագրվել են «Տիգրան Մանսուրյան» կենսամատենագիտության քարտերը, խմբագրվել են «Մշակ» թերթի /Թիֆլիս, 1872-1921թթ./ 1879թ. անվանական և առարկայական ցանկերը: Կազմվել է «Գարնանամուտ» բանաստեղծությունների ժողովածուն:

Կազմվել է ՀԱԳ-ի մի քանի հրատարակությունների ցանկ՝ БАЕ-ի "Золотой фонд" հավաքածուի համար:

Հայ գրքի մատենագիտության և սփյուռքահայ մամուլի ենթաբաժնում տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները: Ավարտվել է 1921-1940թթ. թարգմանական գրականության մատենագիտության օժանդակ ցանկերի կազմումը (վերնագրային, անձնանունների, տպագրության վայրերի և տպարանների): Օժանդակ ցանկերի կազմման ընթացքում գրադարանի հավաքածուներում գրքերի հետ

համեմատվել և ճշտվել է 64 քարտ: Էլեկտրոնային համահավաք գրացուցակից կատարվել է շուրջ 70 գրքի ստուգում և ճշտում: Գրադարանի գրացուցակներում ստուգվել և համեմատվել են Սուրեն Բայրամյանի (Եգիպտոս) կողմից տրամադրած ցուցակները՝ 1921-1940 թթ. Եգիպտոսում կատարված հրատարակությունները, լրացվել է 123 գրքի քարտ: Երուսաղեմի Սուրբ Հակոբյան տպարանի գրացուցակները համեմատվել են «Հայ գրքի մատենագիտության» 2-րդ, 3-րդ, 4-րդ հատորների հետ:

«Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության համար աշխատանք է կատարվել ԳԱԱ հիմնարար, ԵՊՀ-ի, Խնկո-Ապոր անվ. գրադարաններում, որի արդյունքում լրացվել է 169 անուն գրքի նկարագրություն:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գրադարանում նայվել է 24 քարտարան և գրանցվել են 102 նոր անուն գրքեր, որոնք կընդգրկվեն մատենագիտության մեջ: Աշխատանք է տարվել նաև Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում, նայվել է 24 քարտարան, գրանցվել է 68 գիրք: Տարվա ընթացքում աշխատանքներ են տարվել մատենագիտության օժանդակ ցանկերի կազմման ուղղությամբ: Խմբագրվել և սրբագրվել է «Հայ գիրքը 1921-1930 թթ.» մատենագիտության էլեկտրոնային տարբերակը և տեղադրվել է գրադարանի կայք-էջում: Մատենագիտությունը ամբողջությամբ կտպագրվի 2012 թվականին՝ վերջնական ճշտումներից և համեմատությունից հետո:

Տարվա ընթացքում ուսումնասիրվել է սփյուռքում հրատարակվող 2.796 միավոր թերթ և 366 միավոր ամսագիր: Նկարագրվել է 14.924 հոդված, ինդեքսավորվել է 14.924 քարտ, կրկնակվել է 870 քարտ: Քարտարաններում տեղադրվել է 15.960 քարտ: Խմբագրվել է քարտարանի 12 արկղ: Հետադարձ համալրմամբ ուսումնասիրվել է 57 միավոր ամսագիր, նկարագրվել է 636 հոդված, կազմվել է 636 քարտ:

Մեթոդական աշխատանքների և գրադարանագիտության ենթաբաժնում տարվա ընթացքում ստացվել է 27 միավոր գիրք, 65 միավոր հանդես, 11 միավոր թերթ: Ընթերցողների թիվը կազմել է 84, հաճա-

խումը՝ 136, ընթերցողներին տրվել է 381 միավոր գրականություն, նկարագրվել է 448 հոդված, տեղադրվել է 448 քարտ:

Կազմվել է «Հիշարժան տարեթվեր-2012» օրացույցը, «Հայաստանի գրադարանները 2010թ.» վիճակագրական վերլուծությունը: Տրվել է գրավոր տեղեկանք՝ «Հայ մեծերը գրականության, գրքի ու լեզվի դերի մասին»: Անց են կացվել մասնագիտական գրականության և մամուլի տեսություններ:

Ֆոնդի թիվը առ 01. 01. 2012թ. կազմել է 2.254 միավոր գրականություն:

Տեղեկատու մատենագիտության ենթաբաժնում 2011 թ. ընթացքում ուսումնասիրվել է 14.566 թերթ, 869 ամսագիր, 299 օտարալեզու գիրք: Կազմվել է հոդվածների նկարագրության 12.803 քարտ, ինդեքսավորվել է 12.803 քարտ:

«Պերսոնալիա» քարտարանի համար կազմվել է 1.358 քարտ և տեղադրվել է քարտարանում: Վերադասավորվել և խմբագրվել է 13.619 քարտ: Խմբագրվել է քարտարանների 8 արկղ: Հետադարձ համալրումով կազմվել է 941 քարտ:

Տեղեկատու գրականության ընթերցասրահի ֆոնդը առ 01.01.2012 թ. կազմել է 15.643 միավոր գրականություն, որից գիրք 3.165 մ., տարեգիր 5.437 մ., տեղեկագիր 2.995 մ.:

Ընթերցողներին 2011թ. ընթացքում տրվել է 11.903 միավոր գրականություն, որից գիրք 4.350, հանդես 7.217, էլեկտրոնային կրիչներ 336 միավոր:

Հաշվետու տարում բաժինը հրատարակման է պատրաստել «Նոր գրքեր» տեղեկատու ցանկերը հայերեն և այլ լեզուներով:

Համակարգչային ընթերցասրահի ֆոնդը առ 01.01.2012 թ. կազմել է 4.046 միավոր էլեկտրոնային կրիչ, որից CD 1.329, DVD 135, EBSCO 292, Floppy 31, VHS 242 ձայներիզ 185, Flesh 2, Pro Quest 1.830 միավոր:

Համակարգչային ընթերցասրահի ընթերցողների թիվը կազմել է 69, հաճախումը՝ 136, տացքը՝ 336 միավոր գրականություն:

Կատարվել է մատենագիտական տեքստի շարվածք՝ 28.677.719 նիշ, մատենագիտական տեքստի համակարգչային սրբագրում՝ 28.677.719 նիշ, էջերի ձևավորում՝ 2.123 էջ, տեքստի շարվածք՝ 177.039 նիշ, տեքստի համակարգչային սրբագրում՝ 177.039 նիշ, աղյուսակի ձևավորում՝ 163 էջ:

Նոտային-երաժշտական գրականության բաժնում շարունակվում են աշխատանքները Տիգրան Մանսուրյանի կենսամատենագիտության կազմման ուղղությամբ:

Մատենագիտական աշխատանքներ են կատարվել նաև Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնում: Նկարագրվել է 9.505 հոդված, կրկնակվել է 1950 քարտ, խմբագրվել է քարտարանի 8 արկղ: Նոտային-երաժշտական բաժնում մշակվել է 200 հոդված, քարտագրվել, քարտերը ինդեքսավորվել ու տեղադրվել քարտարաններում: Խմբագրվել է քարտարանի 13 արկղ:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժնում 2011թ. շարունակվել են Հակոբ Կոջոյանի ու Հակոբ Հակոբյանի մատենագիտությունների կազմման աշխատանքները:

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժնի եզակի հավաքածուների ենթաբաժնում 2011 թ. ևս շարունակվել են «Հայ երգարանները» մատենագիտության կազմման աշխատանքները:

2011 թվականին գրադարանի ընթերցողներին տրվել են 19 գրավոր և 32.067 բանավոր մատենագիտական տեղեկանքներ: Տրված բանավոր տեղեկանքների պատկերը ըստ առանձին բաժինների հետևյալն է՝ մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին - 643, արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների - 1.900, սպասարկման բաժին - 27.615, նոտային-երաժշտական գրականության բաժին - 425, գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին - 1.348, հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժին - 136: Բանավոր տեղեկանքների մեծ մասը տրվել է սպասարկման բաժնի տարբեր օղակներում: Մատենագիտական խորհրդատվություններ են անցկացվել՝ մատենագիտության և գիտական հետազոտություն-

ների բաժին - 1.680, արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին - 1.400, սպասարկման բաժին - 3.765, նոտային-երաժշտական գրականության բաժին - 350, գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին - 325, ընդամենը՝ 7.520:

Մատենագիտական տեսություններ են անցկացվել. մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժին - 6, արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժին - 2, նոտային-երաժշտական գրականության բաժին - 2, գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին - 3:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ընթացիկ տարում Հայաստանի ազգային գրադարանում 138 միջոցառում է կազմակերպվել, որից 14-ը անցկացվել է գրադարանից դուրս՝ մայրաքաղաքի և մարզային մշակութային կենտրոններում:

2011 թվականի միջոցառումները տարաբնույթ են՝ հոբելյանական ցերեկույթներ, գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ արվեստի և գրականության, գրադարանային ոլորտի նշանավոր ներկայացուցիչների հետ, ֆիլմերի ցուցադրություններ, գրական քննարկումներ, գիտաժողովներ, ինչպես նաև այցելություններ քաղաքային, մարզային և գյուղական գրադարաններ, այդ թվում՝ «Փոքր Մհեր» կադետա-սեպուհական համալիր, Երևանի համալսարաններ, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի, Արարատի, Վայոց ձորի, Արցախի գրադարաններ և մշակույթի կենտրոններ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են հիշատակի ցերեկույթներ: Դրանցից առանձնացնենք մի քանիսը՝ Հրանդ Դինքի ծննդյան օրվա առթիվ միջոցառում և հանդիպում «1,5 միլիոն, գումարած մեկ» կազմակերպության ներկայացուցիչների հետ, գրքային ցուցահանդես, ֆիլմի ցուցադրություն, Վահան Տերյանի հիշատակին նվիրված ցերեկույթ, Համաստեղի հիշատակին նվիրված միջոցառում:

Թեմատիկ միջոցառումների շարքում առանձնանում են Հայկական բանակի օրվան, Մայրենի լեզվի օրվան նվիրված ցերեկույթները, մանկապատանեկան գրքի շաբաթի փակումը, Ազգային գրադարանային շաբաթի շրջանակում կազմակերպված միջոցառումների շարքը, Ազգային գրադարանի կայք-էջի շնորհանդեսը, Գրքի և հեղինակային իրավունքի միջազգային օրվան նվիրված կլոր սեղանը, Ընտանիքի միջազգային օրվան նվիրված միջոցառումը, Ազգային գրադարանի օրվա շրջանակում միջոցառումների շարքը, ՀՀ Անկախության տոնին նվիրված միջոցառումը, Գրադարանային երեկոյի ընթացքում կազմակերպված միջոցառումների շարքը, «Առողջության օրը»:

Շնորհանդեսներից են Սասուն Գրիգորյանի «Մուսաները չլռեցին, քեզ համար, Արցախ», Աշոտ Մինասյանի «Պարսկական ժամանակակից պոեզիա», Աբիգի «Գերմանի», Սվյատոսլավ Կուլչիցկու «Ինչու էր նա մեզ ոչնչացնում», «Սողոմոն Թեհլերյանի վերհիշումները, «Թալեաթի ահաբեկումը», «Մաշտոց» հանդեսի Ա-Գ հատորները, Ֆիլիպ Վիդըլեի «Թուրքական գիշեր», Խաչիկ Սաֆարյանի «Հայկական», Արամ Հայկազի «Նամականի», «Մոռացված էջեր», Ասլան Ասլանյանի «Սայիադ Նովա», «Կին քաղաքական գործիչներից, կին քաղաքական գործիչներին», Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն, ականատես վերապրողների վկայություններ», Էմիլի Կարլիեի «Կոտորածների մեջ», Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության 2009-2011թթ. հրատարակած գրքերի, Տիգրան Դավթյանի «Հայերեն-պարսկերեն բառարանի», Այդին Մորիկյանի «Հանդիպում», Ռուզան Արևյանի «Գոյության արահետներով», Էդուարդ Վարդազարյանի «Կյանքի սոնետներ», Գեղամ Պետրոսյանի «ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի հետ 1918-1920թթ.», Սարուխանի «Ալեքսանդր Մանթաշյանց. մեծ վաճառականը և բարեգործը», Սերգեյ Մկրտչյանի «333 ասույթ», Հարություն Իսկահատյանի «Վկայարան հայկական ցեղասպանության», Վիլեն Մարտիկյանի «Կյանքին ընդառաջ», Արմեն Տեր Կյուրեղյանի «Սմբատի կյանքը և գործը», Անժելա Սահակյանի «Իրական պատկերներ», Յուրի Սարգսյանի «Արարատյան լեռների գաղտնիքը», Գարեգին Նժդեհի «Ընտիր երկեր», Արմեն Հարությունյանի

«Համեմատական մանկավարժություն», Իդա Հակոբյանի «Ճգնաժամը սկսվում է գիտության հիմքերից», Նարինե Զարիֆյանի «Վոկալիզ», Յուրա Պետրոսյանի «Նարեկացու հետ», Գագիկ Սուքիասյանի «Գրադարանային տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում»:

Հանդիպումներ են եղել ԱԺ պատգամավոր Լարիսա Ալավերդյանի, բանաստեղծուհի Սեդա Վերմիշևայի, թուրք հրատարակիչ Ռագըպ Զարաքոլուի, Շվեյցարիայից ժամանած պատվիրակության հետ, Ֆրանսիայի գրքի ազգային կենտրոնի տնօրեն Ժան Ֆրանսուա Կոլոսիմոյի, գեներալ Աշոտ Պետրոսյանի, լիբանանահայ գործիչ Ժիրայր Դանիելյանի, իտալահայ Լևոն Զեքիյանի հետ:

Հոբելյանական միջոցառումներից առանձնանում են պետական հասարակական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյան-125, բանաստեղծ Միսաք Մեծարենց-125, Վաչագան Սարգսյան-60, պետական կուսակցական գործիչ Զեմմա Անանյան-80, Հակոբ Մնձուրի-125 և այլ հանդիսությունները:

Ցուցադրվել են Աննա Թովմասյանի «Կամավորը», Աննա Բաբայանի «Դեռ կիանդիպենք, տղերք», Հակոբոս Երուսաղեմցու «Հուշերգ մայրիկին» ֆիլմերը:

Մայիսի 31-հունիսի 1-ը անցկացվել է երկօրյա գիտաժողով «Հայկական գրատպություն. անցյալը և ներկան» թեմայով՝ նվիրված հայկական գրատպության 500-ամյակին: Անցկացվել է «Հայաստանի գրադարանները 2009» թեմայով խորհրդակցություն, որին մասնակցել են այլ գրադարանների աշխատակիցներ: «Հովհ.Թումանյանը՝ հայ գրականության զարգացման ելակետ, չափանիշ և ուղենիշ» թեմայով անցկացվել է քննարկում:

Տարվա ընթացքում կազմակերպված հանդիպումները նպաստել են Ազգային գրադարանի կապերի ամրապնդմանը հայաստանյան և սփյուռքահայ գործիչների հետ:

Ուշագրավ են գրադարանից դուրս կազմակերպած միջոցառումները: Մաշտոցի 1650-ամյակի առթիվ գրադարանը միջոցառում է կազմակերպել Օշականում, Մաշտոցի գերեզմանին հարգանքի տուրք

մատուցել: Ազգային գրադարանային շաբաթի շրջանակներում գրադարանը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կազմակերպած գրական-մշակութային միջոցառմանը:

Շրջիկ գրադարանով տարվա ընթացքում այցեր են եղել «Փոքր Միեր» կադետասեպուհական համալիր, Երևանի համալսարաններ, Կոտայքի, Սյունիքի, Շիրակի, Արարատի, Վայոց ձորի, Արցախի գրադարաններ:

2011 թվականի միջոցառումներին մասնակցել և ելույթ են ունեցել 300-ից ավելի պետական պաշտոնյաներ, գրականագետներ, նկարիչներ, ովքեր «Տպավորությունների գրքում» գրառումներ են կատարել:

Ստեղծվել է 1999-2011թթ. ընթացքում կազմակերպված միջոցառումներին նվիրված լուսանկարների հարուստ արխիվ: Այժմ լուսանկարները պահպանվում են համակարգչում՝ առանձին ֆայլերով: Արխիվային լուսանկարները պահպանվում են նաև տեսասկավառակներով:

«Յոգևոր հայրենիք» ամսաթերթի խմբագրությունը ամեն ամիս թերթի լույսընծայման հետ միասին կազմակերպվելիք միջոցառումների մասին տեղեկացնում է հայաստանյան զանգվածային լրատվամիջոցներին: Մամուլի հաղորդագրություն է կազմում և ուղարկում էլեկտրոնային փոստով: Միջոցառման մասին հայտարարությունը տեղադրվում  է Ազգային գրադարանի կայք-էջում: Միջոցառումից հետո ինֆորմացիան համապատասխան լուսանկարներով տեղադրվում է կայք-էջում, նաև ուղարկվում է սփյուռքի և տեղական թերթերին:

«Յոգևոր հայրենիք» ամսաթերթի աշխատակիցները, բացի Ազգային գրադարանում կազմակերպվող միջոցառումներից, անդրադառնում են նաև  հանրապետության մշակութային անցուդարձին:

2011 թվականին միջոցառումներ են կազմակերպել նաև գրադարանի մյուս բաժինները:

Արվեստի գրականության և ոչ գրքային հրատարակությունների բաժինը կազմակերպել է միջոցառումներ՝ նվիրված Գրիգոր Խանջյանի 80 և Ռոբերտ Էլիբեկյանի 40-ամյակներին, Գրադարանավարի օրը կազմակերպել է Թաիրովի հավաքածուի հետաքրքիր նմուշների ցուցադրու-

թյուն: Միջոցառումների ընթացքում ցուցադրելու համար տրամադրվել է 450 միավոր գրականություն:

Նոտային-երաժշտական գրականության բաժինը կազմակերպել է Առնո Բաբաջանյանի 90-ամյակին նվիրված ցուցադրություն և նրա ստեղծագործությունների լսումներ, դասական երաժշտության լսումներ, Գուսան Հայկազունու հետ հանդիպում և խտասկավառակի լսում, Սվետլանա Նավասարդյանի կատարմամբ դաշնամուրային ստեղծագործությունների, Հայրենական մեծ պատերազմին նվիրված երգերի լսումներ, Անահիտ Ցիցիկյանի 85-ամյակին նվիրված ցուցահանդես: Բաժինը մասնակցել է միջոցառումների բաժնի կազմակերպած ցուցադրություններին՝ իր հավաքածուներից տրամադրելով 37 միավոր գրականություն: Բաժնի աշխատակիցները պարբերաբար հոդվածներ են տպագրում «Հոգևոր հայրենիք» ամսաթերթում:

Սպասարկման բաժինը կազմակերպել է «Տպագրությունը Վիեննայում», «Գրիգոր Զոհրապ - 150», «Գարեգին Նժդեհ - 125», «Ֆրիտյոֆ Նանսեն - 150», «Հրաչյա Աճառյան - 135», «Շրջակա միջավայրի պահպանություն», «Ստեղծագործում են մեր ընթերցողները» ցուցադրությունները:

Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժինը հաշվետու տարվա ընթացքում կազմակերպել է Հովհաննես Պետրոսյանին նվիրված ցուցադրությունը, «Գրատպությունը տեսական և մատենագիտական աղբյուրներում», «Ազգային գրադարանի հրատարակությունները» ցուցահանդեսները:

Հնատիպ, հազվագյուտ և արխիվային գրականության բաժինը տարվա ընթացքում կազմակերպել է «Հնդկաստանում տպագրված հայերեն գիրք», «Ֆրանսերեն հնատիպ գիրք», «Ռուսական հնատիպ գիրք», «Հայ պատմիչներ», «Հայ թարգմանիչներ», «Կոնդակների հավաքածու», «Հայերեն մանկական գրականություն», «Հայ գիրքը Վենետիկում» ցուցադրությունները:

Գրադարանի բոլոր միջոցառումներին մասնակցել են գրադարանի աշխատակիցները, ընթերցողները և բազմաթիվ հյուրեր՝ գրողներ, ար-

վեստագետներ, հասարակական գործիչներ, գիտնականներ, ասմունքողներ, երգիչներ, կոնսերվատորիայի ուսանողներ, դպրոցականներ և հյուրեր արտերկրից: Միջոցառումների մասին տեղեկատվություն է տեղադրվել գրադարանի կայք էջում:

2011 թվականի միջոցառումները լուսաբանել են 10 հեռուստաընկերություններ, հեռարձակվել է 51 ռեպորտաժ, 25 ռադիոհաղորդում, 200 հոդված հայաստանյան և սփյուռքի մամուլում, 200 մեկնաբանություն ինտերնետային կայքերում:

2004 թվականից հրատարակվում է «ԶԼՄ արձագանքներ. տարեգիրքը», որը ներառում է Ազգային գրադարանի մասին զանգվածային լրատվամիջոցների արձագանքները /հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, լրատվական գործակալություններ, ինտերնետային կայքեր/, գրադարանի կազմակերպած բոլոր միջոցառումներին:

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու 2011 թվականին շարունակվել են «Հայաստանի գրադարանների միասնական ավտոմատացված ցանց» ծրագրի մուտքագրման, ծրագրային ապահովման և կոորդինացման աշխատանքները:

Հաշվետու տարում կատարվել է 33.000 անուն և 115.308 միավոր գրականության մուտքագրում:

Ընդհանուր բազայի տարեկան մուտքերը կազմել են 75.774 անուն և 367.514 միավոր գրականություն:

Ազգային գրադարանում են իրագործվում 10 գրադարանների նրբաթել կոդերի տպագրման աշխատանքները: Հաշվետու տարում կատարվել է 327.000 պիտակի տպագրում: 2011թ. ընթացքում ձևավորվել է գրադարանի նոր կայքը, որտեղ «Թվային գրադարան» բաժնում տեղադրվել են Հայ հնատիպ գրքերի տպարանների էլեկտրոնային շտեմարանը, 10 միավոր հմայիլի, 20 միավոր աշխարհագրական քարտեզի, 50 միավոր գրքի թվանշացված տարբերակները, հայ գրքի 1851-1900թթ., 1901-1920թթ. և 1921-1930թթ. մատենագիտական ցան-

կերը, եգիպտոսի «Արև» լրագրի մատենագիտության էլեկտրոնային տարբերակի 43 հոդված: Կայքի այցելությունները գրանցող պատուհանում արձանագրվում են կայքից օգտվողների թիվն ու աշխարհագրությունը: Կայքը զարգացնելու ու կատարելագործելու ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Ընդլայնվել է գրադարանի ներքին ցանցը:

Թարմացվել է գրադարանի սպասարկող կայանի ծրագրային ապահովումը, ստեղծվել է գրադարանի էլեկտրոնային փոստ. բոլոր բաժինները ունեն էլեկտրոնային հասցե: Փաստաթղթաշրջանառությունը գրադարանի ներսում հիմնականում կատարվում է էլ. փոստով:

Տարվա ընթացքում կատարվել է 2.865.300 նիշ շարվածք, 3.220.500 նիշ շարվածքի ձևավորում, 8.398.500 նիշ շարվածքի համակարգչային սրբագրում:

Կատարվել է հետևյալ գրքերի էջերի մակետավորում՝ «Նոր գրքեր 2010» - 2-րդ կիսամյակ (հայերեն, ռուսերեն), «Նոր գրքեր 2010» օտար լեզուներով, «Նոր գրքեր 2011»-1-ին կիսամյակ (հայերեն), «Տարեգիրք. Զանգվածային լրատվամիջոցների արձագանքները»-2010թ., «Տարեգիրք. Զանգվածային լրատվամիջոցների արձագանքները»-2009թ., «Գրադարանի 2011թ. աշխատանքային պլանը», «Գրադարանի 2010թ. կատարած աշխատանքների հաշվետվությունը», «Հիշարժան տարեթվեր 2012» օրացույցը, «Հայաստանի գրադարանները 2010թ.» վիճակագրական վերլուծությունը, «Հոգևոր Հայրենիք» ամսաթերթի 6 համարները: Ընդամենը՝ 1054 էջ՝ 80 տպագրական մամուլ:

Թվայնացվել է 334 միավոր գիրք՝ 72.438 էջ, որից մշակվել է 10.120 էջ:

## ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում տպագրվել են «Հայաստանի գրադարանները 2010թ.» աշխատանքների վիճակագրական վերլուծությունը, «Նոր գրքեր» 2011թ. հայերեն կիսամյա ցանկի կազմը, «Հիշարժան տարեթվեր - 2012» օրացույցը:

Տպագրվել են Հայաստանի ազգային գրադարանի և գրադարանային ասոցիացիայի «Հոգևոր Հայրենիք» պաշտոնաթերթի վերջին չորս համարները:

Տարվա ընթացքում կազմվել է 4.767 միավոր գրականություն, որից՝ 1.752 գիրք, 2.746 կազմ թերթ, 269 ամսագիր:

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

Հայաստանի Ազգային գրադարանում 2012թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատում է 321 մարդ:

Գրադարանային աշխատողներից 308-ը կամ մոտ 96%-ը կանայք են:

Գրադարանային բաժինների աշխատողների ցուցանիշները ըստ կրթության հետևյալ պատկերն ունեն

| | |
|---|---|
| Բարձրագույն գրադարանային կրթություն | 35(10,9%) |
| Բարձրագույն ոչ գրադարանային կրթություն | 190 (59,1%) |
| Միջին մասնագիտական կրթություն | 43(13,4%) |
| Միջին ոչ մասնագիտական կրթություն | 25 (7,9%) |
| Միջնակարգ կրթություն | 28 (8,7%) |

Աշխատողների մեծ մասը՝ 225 մարդ, կամ աշխատակազմի 70%-ը ունի բարձրագույն կրթություն:

Գրադարանի աշխատողների ցուցանիշները ըստ աշխատանքային ստաժի հետևյալ պատկերն ունեն

| | |
|---|---|
| 1-5 տարի | 124 մարդ (38,7%) |
| 6-10 տարի | 72 մարդ (22,4%) |
| 10-ից ավելի | 125 մարդ (38,9%) |

2011 թվականին գրադարանի 29 աշխատակիցներ նվիրված աշխատանքի համար արժանացել են տարբեր պարգևների: ՀՀ մշակույթի նախարարության պատվոգիր են ստացել 5 աշխատակիցներ, «Աւետիս Ահարոնեան» հուշամեդալ` 1 հոգի, Հայաստանի մշակույթի աշխատողների ճյուղային արհմիության նախագահի պատվոգիր` 4 հոգի, աշխատանքային հոբելյանի պատվոգրեր և շնորհակալագրեր` 15 աշխատակիցներ:

## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՅԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՐՔԱՏԱՑՔԸ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ 2011Թ.

| Բաժինները | Յաճախումը | | Գրքատացքը | |
|---|---|---|---|---|
| | Նախա-տեսվել է | Կատար-վել է | Նախա-տեսվել է | Կատար-վել է |
| Սպասարկման | 255.800 | 257.848 | 1.429.000 | 1.521.123 |
| Նոտային-երաժշտական գրականության | 2.200 | 1.860 | 6.000 | 2.250 |
| Արվեստի գրակ. և ոչ գրքային հրատարակու-թյունների | 2.200 | 2.040 | 17.200 | 16.800 |
| Մատենագիտության և գիտական հետազոտ. բաժին | 2.300 | 1.394 | 17.480 | 12.285 |
| Յնատիպ, հազվագյուտ և արխիվ. գրակ. | 3.000 | 2.534 | 10.000 | 6.328 |
| Ինտերնետային սպա-սարկում | 3.000 | 2.188 | 11.000 | 7.658 |
| Բաժնույթների | 5.440 | 3.865 | 17.320 | 17.367 |
| **Ընդամենը՝** | 273.940 | 271.729 | 1.508.000 | 1.583.811 |

## 2011Թ. ՍՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

| N | Հրատարակչական տեսակները | 2011թ. | |
|---|---|---|---|
| | | Նախատեսվել է | Կատարվել է |
| 1 | Գիրք | 28.363 | 25.792 |
| 2 | Հանդես | 12.700 | 14.462 |
| 3 | Լրագիր | 1.500 | 2.231 |
| 4 | Շարունակվող հրատ.-ներ | 100 | 100 |
| 5 | Քարտեզ | 40 | 41 |
| 6 | Նոտա | 220 | 473 |
| 7 | Ձայնապնակ | - | 24 |
| 8 | Խմբային մշակման նյութեր | 1.200 | 1.309 |
| 9 | Սեղմագիր | 5.100 | 6.102 |
| 10 | Ատենախոսություն | 550 | 448 |
| 11 | DVD, CD (տեսաերիզ) | 300 | 323 |
| 12 | Կերպարվեստի նյութեր | 525 | 579 |
| 13 | Ատլաս, դրոշ | 15/ | 25/ |
| 14 | Ձայներիզ | /20 | 7/53 |
| 15 | Նամականիշ/ բուկլետ | 580/150 | 763/405 |
| 16 | Հրավիրատոմս | 2.922 | 386 |
| 17 | Օրացույց | 90 | 1300 |
| 18 | Պլակատ/վերատպ. | 50/ | 68//2 |
| 19 | Բացիկ/ծրար | 150/ | 250/240 |
| 20 | Լուսանկար / նկար | 10/15 | 38/49 |
| 21 | Աղդագիր/էջանշան | 22/ | 301/13 |
| 22 | Դրամ/կրցքանշան | - | /5 |
| 23 | Դիդակտիկ նյութ | - | 11 |
| | **Ընդամենը՝** | 54.622 | 54.630 |

## ԳՈՐԾՈՂ ՖՈՆԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ ԸՍՏ ԼԵԶՈՒՆԵՐԻ 20011Թ.

| N | | Ընդամենը | Որից | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Հայերեն | Ռուսերեն | Այլ լեզուներ |
| 1 | Եղել է առ 1.01.2011թ. | 6.534.846 | 1.540.000 | 4.409.258 | 585.588 |
| 2 | Մուտք է եղել 2011թ. | 40.744 | 21.846 | 7.265 | 11.633 |
| 3 | Ելք է եղել 2011թ. | - | - | - | - |
| 4 | Կազմում է առ.1.01.2012թ. | 6.575.590 | 1.561.846 | 4.416.523 | 597.221 |

## ԳՐԱԴԱՐԱՆԻ ՖՈՆԴԵՐԸ 2011Թ.

| N | | Կազմել է առ 1.01.2011թ. | Ստացվել է 2011թ. | Դուրս է գրվել 2011թ. | Կազմում է առ 1.01.2012թ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գործող ֆոնդեր | 6.534.846 | 40.744 | - | 6.575.590 |
| 2 | Պահուստային ֆոնդ | 109.415 | 6.326 | 45 | 115.696 |
| 3 | Գրքափոխանակ. ֆոնդ | 115.987 | 9.235 | 14.351 | 110.871 |
| | **Ընդամենը՝** | 6.760.248 | 56.305 | 14.396 | 6.802.157 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2011Թ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՂՅՈՒՍԱԿ

| N | Գրադարաններ, կազմակերպություններ, անհատներ | Ստացված | Ուղարկված |
|---|---|---|---|
| 1. | ԱՄՆ, Արամ Արկուն | 25 | 8 |
| 2. | ԱՄՆ, Բոստոնի Հայկական գրադարան-թանգարան (ALMA) | 1 | 2 |
| 3. | ԱՄՆ, Միչիգան, Դիրբորնի համալսարանի Հայագիրական հետազոտությունների գրադարանի տնօրեն Արա Սանջյան | 13 | 27 |
| 4. | ԱՄՆ, Գարին Հովհաննիսյան | 7 | - |
| 5. | Կալիֆոռնիա, Հայ ուսանողական միություն | 25 | 23 |
| 6. | ԱՄՆ, Կարո Ղազարյան | 60 | 1 |
| 7. | ԱՄՆ, Կոնգրեսի գրադարան | 95 | 101 |
| 8. | ԱՄՆ, Նյու Յորքի արևելյան շրջանի Ազգային Առաջնորդարան, Նուբար Մկրյանը /փոխատենապետ/ | 15 | 1 |
| 9. | ԱՄՆ, Նյու Յորքի արևելյան շրջանի Ազգային Առաջնորդարանի ատենապետ Վազգեն Ղուկասյան | 30 | 8 |
| 10. | Բելառուսի Ազգային գրադարան | 9 | 13 |
| 11. | Բուլղարիա, Ազգային գրադարան, Արմանդ Բասմաջյան | 45 | 3 |
| 12. | Բուլղարիա, Սբ. Կիրիլ և Մեֆոդիի անվ. գրադարան | 56 | - |
| 13. | Գերմանիա, Ժիրայր Քոչարյան | 6 | 4 |
| 14. | Գերմանիա, Բեռլինի Պետական գրադարան | 3 | 3 |
| 15. | Եգիպտոս, Սուրեն Բայրամյան | 9 | 8 |

| | | | |
|---|---|---|---|
| **16.** | Երուսաղեմի միաբան՝ Հայր Շնորհ աբեղա Պալոյան | 9 | 19 |
| **17.** | Թուրքիա, Հայ Պատրիարքարան, Վաղարշակ Սարկավագ Սերովբեան | 8 | 19 |
| **18.** | Թուրքիա, Մարդու իրավունքների պաշտպան՝ Ռագըպ Զարաքոլու | - | 2 |
| **19.** | Թուրքմենիա, Կենտրոնական գիտական գրադարան | - | 1 |
| **20.** | Իտալիա, Լևոն Զեքիյան | 2 | 4 |
| **21.** | Իսրայել, Կրիվոնոս Վլադիմիր | 6 | |
| **22.** | Իրան, Ազգային գրադարան | 57 | 7 |
| **23.** | Իրան, Իսրայել Վարդանյան | 25 | - |
| **24.** | Իրան, Սպահանի հայոց թեմական խորհուրդ, Վրեժ Տեր-Մարտիրոսյան | - | 3 |
| **25.** | Լեհաստան, Ազգային գրադարան | 11 | 1 |
| **26.** | Լիբանան, Ազդակի խմբագրություն | - | 2 |
| **27.** | Լիբանան, Համազգային Հայ Կրթական Մշակութային Միության Կենտրոնական վարչության մասնաճյուղեր | 19 | 20 |
| **28.** | Լիբանաբ, Հայկազեան Հայագիտական հանդեսի խմբագրություն | 16 | - |
| **29.** | Կիրգիզիա, Ազգային գրադարան | 11 | 1 |
| **30.** | Կորեա, Ազգային Ակադեմիա | 6 | - |
| **31.** | Կորեա, Ազգային Ասամբլեա Գրադարան | 14 | 6 |
| **32.** | Կորեա, Ազգային թանգարան | - | 1 |
| **33.** | Կորեա, Սահմանադրական դատարան | 1 | - |
| **34.** | Հնդկաստան, Կալկաթա | 4 | - |
| **35.** | Հոլանդիա, Աննա Մարտիրոսյան | 9 | 6 |
| **36.** | Հունգարիա, Ազգային գրադարան | 2 | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| 37. | Հունգարիա, Բենեդեկ Զիգմունդ | - | 6 |
| 38. | Հունգարիա, Մշակութային կենտրոն | 2 | - |
| 39. | Հունգարիա, «Տրանսիլվանիայի հայ արմատներ» | - | 4 |
| 40. | Ղազախստան, Ազգ. Ակադեմիական գրադ. | 3 | 1 |
| 41. | Ղազախստան, Ազգ. գրադ.տնօրեն՝ Բերդիգալևա Ռ.Ա. | 4 | 1 |
| 42. | Ղազախստան, Պավլոդարսկի պետ. համ. գիտ.-ն գրադարան | - | 8 |
| 43. | Ճապոնիա, Ազգային Դիեթ գրադա-րան | 10 | 7 |
| 44. | Մոլդովա, Ազգային գրադարան | - | 1 |
| 45. | Չեխիա, Ազգային գրադարան | 1 | 5 |
| 46. | Չեխիա, Միջազգային կապերի ինստիտուտ | 4 | 1 |
| 47. | Պորտուգալիա, Զավեն Եկավյան | 2 | 2 |
| 48. | Պորտուգալիա, Գյուլբենկյան հիմնարկություն | - | 3 |
| 49. | ՌԴ, Ազգային գրադարան | 14 | 17 |
| 50. | ՌԴ, Ազգագրական թանգարան | - | 1 |
| 51. | ՌԴ, ԳԱԱ Գիտական տեղեկատվական և Հասարակ. Գիտութ. ինստիտուտ | 11 | 18 |
| 52. | ՌԴ, "Լիտ. գազ." Թերթի գլխավոր խմբագիր՝ Յու. Մ. Պոլյակով | - | 1 |
| 53. | ՌԴ, Մոսկվա, Գրիգորյան Աշոտ | 5 | 1 |
| 54. | ՌԴ, Մոսկվա, Աիդա Մարկոսյան | 14 | 2 |
| 55. | ՌԴ, Բրյանսկի մարզի Գիտական Ունիվերսալ Գրադարան /հայ համայնք/ | - | 395 |
| 56. | ՌԴ, Նախագահի աշխատակազմի գրադարան | - | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| **57.** | ՌԴ, Նեկրասովի անվ. Կենտրոնական գիտական հանրային գրադարան | - | 1 |
| **58.** | ՌԴ, Չալդր, Հայ Առաքելական եկեղեցի | 1 | 2 |
| **59.** | ՌԴ, Պետական գրադարան | 64 | 23 |
| **60.** | ՌԴ, Պուշկինի անվ. Գիտական գրադարան | 1 | 1 |
| **61.** | ՌԴ, Վլադիմիր Հարությունյան | 2 | 3 |
| **62.** | ՌԴ , Օրենբուրգի հայ համայնք | - | 4 |
| **63.** | Սերբիա, Վիկտոր Լազիկ | 3 | 10 |
| **64.** | Սիրիա, Միհրան Մինասյան | 45 | 6 |
| **65.** | Սիրիա, Վերապատվելի Սերոբ Մկրտչյան | 8 | 3 |
| **66.** | Ուզբեկստան, Տաշքենդ, Ազգային գրադարան | - | 3 |
| **67.** | Ուկրաինա, Ազգային գրադարան | 1 | 1 |
| **68.** | Ուկրաինայի հայ համայնք /ստացել է Մշակույթի նախարարությունը/ | - | 4 |
| **69.** | Ֆրանսիա, Ազգային գրադարան | 1 | 13 |
| **70.** | Ֆրանսիայի գրքի Ազգային Կենտրոնի տնօրեն՝ Ժան Ֆրանսուա Կոլոսիմո | - | 1 |
| **71.** | Ֆրանսիա,Անուշ Կունտ | 1 | 1 |
| **72.** | Ֆրանսիա, Դընի Դոնիկյան | 12 | 2 |
| **73.** | Ֆրանսիա, Իդա Տեր- Հարությունյան | 1 | - |
| **74.** | Ֆրանսիա, Ռ. Տեր-Սերգերյան | 5 | 5 |
| **Ընդամենը՝** | | 814 | 858 |

# ՖՈՆԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ ԸՍՏ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

| | Ընդամե-նը | Հասար. քաղ. | Լեզ-վաբ. | Ճշգր. գիտ. | բժշկութ. | տեխն. | գյուղա-տնտ. | արվեստ | սպորտ | գեղ. գրակ. | գրա-քննադ. | աշխրհ. | Ընդ. բաժ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կազմում է առ 1.01.11թ | 6534846 | 1603879 | 163903 | 1060378 | 186528 | 1763530 | 301622 | 501909 | 19224 | 613578 | 103799 | 67657 | 146911 |
| Մուտք է արվել 2011թ. | 40744 | 20531 | 1034 | 1446 | 2362 | 637 | 230 | 5212 | 186 | 8040 | 279 | 37 | 750 |
| Ելք է արվել | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| Կազմում է առ 1.01.2012թ | 6575590 | 1626338 | 164937 | 1061824 | 188890 | 1764167 | 301822 | 507121 | 19440 | 621618 | 104078 | 67694 | 147661 |

# 2011Թ. ՍՏԱՑՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

| | Ատացումներ | Գրքեր | | Հանդես | | Լրագիր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| ա) Հայրենական հրատարակություններ | | | | | | | | | |
| 1 | Հանրապետ. ծրի պարտադիր | 4525500 | 10221 | 1442790 | 2714 | 1783804 | 600<br>11949 | 7752094 | 13535 |
| 2 | Գնում անհատ.-ից և կազմակերպ.-ից | 6930435 | 2727 | - | - | - | - | 6930435 | 2727 |
| 3 | Գրադ. հրատ. | 654580 | 657 | - | - | - | - | 654520 | 657 |
| 4 | Նվեր անհատ. և կազմ. | 11187986 | 15843 | 2915500 | 5318 | 183515 | 1441<br>11814 | 15957001 | 22602 |
| 5 | Նվեր արտ. երկրներից | 6313900 | 7311 | 5141000 | 4779 | 668815 | 70<br>2698 | 12123715 | 12160 |
| 6 | Բաժանորդագր. | - | - | 13159400 | 1371 | 990190 | 100<br>2569 | 14149590 | 1471 |
| | Ընդամենը | 29612401 | 36759 | 22658690 | 14182 | 5296324 | 2211 | 57567415 | 53152 |
| բ) գրքափոխանակություն | | | | | | | | | |
| 1 | Միջազգ. գրք.-փոխ. | 728800 | 814 | 219600 | 429 | 133900 | 20<br>476 | 1082300 | 1263 |
| 2 | Հայաստանյան գրքափոխ. | 190600 | 211 | 2200 | 4 | - | - | 192800 | 215 |
| 3 | Ընդամենը՝ | 919400 | 1025 | 221800 | 433 | 133900 | 20 | 1275100 | 1478 |
| | Ընդամենը՝ | 30531801 | 37784 | 22880490 | 14615 | 5430224 | 2231 | 58842515 | 54630 |

## ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԱԺԻ

| Պաշտոնը | Զբաղեցված պաշտոն. քանակը | Ըստ կրթության | | | | | Ըստ ստաժի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բարձրագույն | | Միջին մասնագիտական | | Միջնակարգ | 1-5 տարի | 6-10 տարի | 10-ից բարձր |
| | | Գրադ. | Ոչ գրադ. | Գրադ | Ոչ գրադ. | | | | |
| 1 | | | | | | | | | |
| Տնօրեն | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Փոխտնօրեն | 3 | 1 | 2 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 2 |
| Գիտական քարտուղար | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| Գլխավոր տնտեսագետ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Կադրերի բաժնի վարիչ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| Կադրերի տեսուչ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Իրավախորհրդատու | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Արխիվարիուս | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Գործավար | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Գլխավոր հաշվապահ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Գլխավոր հաշվապահի տեղակալ | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 |
| Ավագ հաշվապահ | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 |
| Տնտեսագետ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 |
| Բաժնի վարիչ | 14 | 6 | 5 | 2 | 0 | 1 | 2 | 3 | 9 |
| Ենթաբաժնի վարիչ | 29 | 8 | 15 | 4 | 1 | 1 | 2 | 5 | 22 |
| Գլխ. գրադարանավար | 48 | 13 | 27 | 5 | 2 | 1 | 2 | 6 | 40 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջատար գրադարանավար | 37 | 2 | 21 | 3 | 7 | 4 | 11 | 12 | 14 |
| 1-ին կարգի գրադարանավար | 74 | 0 | 49 | 7 | 14 | 4 | 42 | 22 | 10 |
| 2-րդ կարգի գրադարանավար | 13 | 0 | 5 | 0 | 4 | 4 | 9 | 1 | 3 |
| Գրադարանավար | 25 | 0 | 10 | 1 | 6 | 8 | 18 | 4 | 3 |
| Գլխ. մատենագետ | 12 | 4 | 8 | 0 | 0 | 0 | 3 | 3 | 6 |
| Առաջատար մատենագետ | 4 | 0 | 4 | 0 | 0 | 0 | 1 | 3 | 0 |
| 1-ին կարգի մատենագետ | 18 | 1 | 14 | 1 | 2 | 0 | 14 | 3 | 1 |
| Ծրագրավորող | 5 | 0 | 4 | 0 | 1 | 0 | 4 | 1 | 0 |
| Օպերատոր | 15 | 0 | 11 | 1 | 2 | 1 | 3 | 6 | 6 |
| Վերականգնող | 4 | 0 | 1 | 0 | 1 | 2 | 2 | 0 | 2 |
| Նկարիչ | 1 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 0 |
| Խմբագիր | 3 | 0 | 3 | 0 | 0 | 0 | 1 | 2 | 0 |
| Կազմարար | 4 | 0 | 0 | 1 | 1 | 2 | 1 | 0 | 3 |
| Ընդամենը՝ | 321 | 35 | 190 | 25 | 43 | 28 | 124 | 72 | 125 |